

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՎՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գավառ քաղաքային համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

Համայնքը հյուսիսի-արևմուտքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Նորատուս գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Սևանա լճին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Կարմիրգյուղ գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Գանձակ և «Ե»-«Զ» հատվածով՝ Ծաղկաշեն գյուղական համայնքներին, արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Արարատի մարզին, հյուսիսից «Է»-«Ը» հատվածով՝ Ծովազարդ, «Ը»-«Թ» հատվածով՝ Լճափ և «Թ»-«Ա» հատվածով՝ Հայրավանք գյուղական համայնքին:

### **ԳՎՎԱՌ – ՆՈՐԱՏՈՒՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Գավառ քաղաքային, Նորատուս և Հայրավանք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բլուրներով, ապա դաշտային ճանապարհով, թիվ 1-19 սահմանակետերով անցնում 4531 մ, հատելով դաշտային ճանապարհները և ձորակները հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 21 սահմանակետով անցնում 594 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, անցնում 359 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 23 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 2035 մ, հատելով Երևան-Գավառ հին ճանապարհը, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, թիվ 27-30 սահմանակետերով անցնում 3584 մ, հատելով Գավառ-Նորատուս միջհամայնքային ճանապարհը, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 32-33 սահմանակետերով անցնում 1309 մ, հատելով Նորատուս-Արծվաքար միջհամայնքային ճանապարհը, ջրատարը, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բնակավայրի հարավային եզրագծով, ապա լանջով, թիվ 35-39 սահմանակետերով անցնում 2075 մ, հատելով Գավառ գետը, դաշտային ճանապարհները, հասնում դաշտային ճանապարհի եզրին

գտնվող թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա արևելք, թիվ 41 սահմանակետով անցնում 1998 մ, հատելով առուն և դաշտային ճանապարհը, հասնում թիվ 42 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի արևելք, թիվ 43-51 սահմանակետերով անցնում 1245 մ, հասնում Գավառ քաղաքային, Նորատուս գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 17730 մ է:

#### **ԳԱՎԱՌ – ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը համընկնում է Սևանա լճի ափին:

#### **ԳԱՎԱՌ – ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Գավառ քաղաքային, Կարմիրգյուղ և Գանձակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է գետի ափին, սահմանագիծը թեքում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 821 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից բնակավայրի եզրագծով թեքվում է դեպի հյուսիս, անցնում 487 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը կրկին բնակավայրի եզրագծով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 666 մ, հատելով Գավառ գետը, հասնում թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 7-12 սահմանակետերով անցնում 6984 մ, հատելով Գավառ-Կարմիրգյուղ միջհամայնքային, դաշտային ճանապարհները, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 14 սահմանակետով անցնում 1674 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, թիվ 16 սահմանակետով անցնում 291 մ, հատելով Սևան-Վարդենիս հանրապետական նշանակության ճանապարհը հասնում Գավառ քաղաքային, Կարմիրգյուղ գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10924 մ է:

#### **ԳԱՎԱՌ – ԳԱՆՁԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Գավառ քաղաքային, Գանձակ և Ծաղկաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Գելի ձոր գետով թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 1-12 սահմանակետերով անցնում 2865 մ, հատելով Գանձակ-Գավառ միջհամայնքային ճանապարհը, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի արևելք, թիվ 14-21 սահմանակետերով անցնում 1444 մ, հասնում Գավառ գետի ափին գտնվող Գավառ քաղաքային, Գանձակ և Կարմիրգյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4309 մ է:

### **ԳԱՎԱՌ – ԾԱՂԿԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Գավառ քաղաքային, Ծաղկաշեն և Գանձակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք ապա հարավ-արևելք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1843 մ, հատելով դաշտային ճանապարհները, ձորերը և առուն հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 6 սահմանակետով անցնում 680 մ, հատելով առուն, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 8 սահմանակետով անցնում 1515 մ, հատելով դաշտային ճանապարհը և առուն, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 10-12 սահմանակետերով անցնում 1113 մ, հատելով դաշտային ճանապարհներ և առուներ, հասնում է ձորի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 220 մ, հատելով առուն, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, հատելով առուները, թիվ 15 սահմանակետով անցնում 371 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 17-18 սահմանակետերով անցնում 308 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը լանջերով և դաշտային ճանապարհներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 20-22 սահմանակետերով անցնում 1423 մ, հատելով ձորը հասնում է թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-

արևելք, հատելով դաշտային ճանապարհներ և առուներ, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 1367 մ, հատելով ձորեր և ձորակներ հասնում թիվ 26 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ-արևմուտք, թիվ 27-28 սահմանակետերով անցնում 903մ, հասնում է թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք ապա արևմուտք թիվ 30-33 սահմանակետերով անցնում 1599 մ հասնում է թիվ 34 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյքուսիս-արևմուտք թիվ 35-36 սահմանակետերով անցնում 1038 մ հասնում է թիվ 37 սահմանակետին, այստեղից թեքվում է հարավ-արևմուտք ձորով, թիվ 38-41 սահմանակետերով անցնում 5951 մ հասնում է Գավառ քաղաքային, Ծաղկաշեն գյուղական համայնքների և Արարատի մարզի տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ձ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18328 մ է:

#### **ԳԱՎԱՌ – ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ձ»-«Ե»**

«Ձ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Գեղարքունիքի և Արարատի մարզերի սահմանների հետ:

#### **ԳԱՎԱՌ – ԾՈՎԱԶԱՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ե»-«Ը»**

Գավառ քաղաքային, Լճափ և Ծովազարդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, ձորով անցնում 1099 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 656 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 785 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվելով դեպի հարավ-արևմուտք, ջրբաժանով անցնում 1015 մ, հասնում Գավառ քաղաքային, Ծովազարդ գյուղական և Արարատի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ը» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3556 մ է:

#### **ԳԱՎԱՌ – ԼՃԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ը»-«Թ»**

Գավառ քաղաքային, Լճափ և Հայրավանք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 2580 մ, հասնում Գավառ քաղաքային,

Լճափ և Ծովագարդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ը» հանգուցային սահմանակետին:

«Ը»-«Թ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2580 մ է:

### **ԳՎՎԱՌ – ՀԱՅՐԱՎԱՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Թ»-«Ա»**

Գավառ քաղաքային, Հայրավանք և Նորատուս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը արևելյան ուղղությամբ, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1256 մ, հատելով ձորակները, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 501 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որից հետո թեքվում հարավ-արևմուտք, գագաթներով անցնում 325 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից լանջերով թեքվում է դեպի արևմուտք, անցնում թիվ 9 սահմանակետով, 687 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը լեռնալանջերով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 1026 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, որից հետո թեքվում դեպի արևմուտք, անցնում 1176 մ, հասնում լեռնագագաթի 2516.8 մ նիշ ունեցող եռանկյունաչափական կետը, որը հանդիսանում է թիվ 12 սահմանակետը: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնելով ջրբաժանով, այնուհետև թեքվելով արևմուտք և հարավ-արևմուտք, թիվ 13-14 սահմանակետերով անցնում 2814 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 506 մ, ջրբաժանով հասնում թիվ 16 սահմանակետին, այնուհետև թեքվում հարավ-արևելք ձորակով և դաշտային ճանապարհով անցնում թիվ 17-19 սահմանակետերով 2021 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս, թիվ 21 սահմանակետով անցնում 460 մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, ձորակներով, լանջերով թիվ 23-24 սահմանակետերով անցնելով 822 մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 26-29 սահմանակետերով անցնում 801 մ, հասնում Գավառ քաղաքային, Լճափ և Հայրավանք գյուղական համայնքների տաեածքների բաժանման «Թ» հանգուցային սահմանակետին:

«Թ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12392 մ է:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մարտունի քաղաքային համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սևանա լճին, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Վաղաշեն գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Գեղիովիտ և «Դ»-«Ա» հատվածով՝ Ներքին Գետաշեն գյուղական համայնքին:

### ՄԱՐՏՈՒՆԻ – ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Սևանա լճի ափին:

### ՄԱՐՏՈՒՆԻ – ՎԱՂԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Մարտունի քաղաքային, Վաղաշեն գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատելով Մարտունի-Վարդենիս հանրապետական նշանակության ճանապարհը, անցնում 1179 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 230 մ հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 3-5 սահմանակետերով անցնում 336 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 22 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 8-9 սահմանակետերով անցնում 332 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 141 մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 12-14 սահմանակետերով անցնում 746 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 216 մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, առվով, թիվ 17-29 սահմանակետերով անցնում 2306 մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 31 սահմանակետով անցնում 572 մ, հասնում թիվ 32

սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 33 սահմանակետով անցնում 606 մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 182 մ, հասնում թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 227 մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 37-38 սահմանակետերով անցնում 801 մ, հասնում թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 40 սահմանակետով անցնում 373 մ, հասնում թիվ 41 սահմանակետին: Թիվ 41 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 57 մ, հասնում թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 246 մ, հասնում թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 48 մ, հասնում թիվ 44 սահմանակետին: Թիվ 44 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 299 մ, հասնում թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, արցնում 69 մ, հասնում թիվ 46 սահմանակետին: Թիվ 46 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 183 մ, հասնում թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, առվով, թիվ 48-53 սահմանակետերով անցնում 643 մ, հասնում թիվ 54 սահմանակետին: Թիվ 54 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, առվով, թիվ 55-63 սահմանակետերով անցնում 2783 մ, հասնում թիվ 64 սահմանակետին: Թիվ 64 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 65-66 սահմանակետերով անցնում 494 մ, հասնում թիվ 67 սահմանակետին: Թիվ 67 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 68-74 սահմանակետերով անցնում 2410մ, հասնում թիվ 75 սահմանակետին: Թիվ 75 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 76-79 սահմանակետերով անցնում 5134 մ, հասնում թիվ 80 սահմանակետին: Թիվ 80 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 81-92 սահմանակետերով անցնում 2737 մ, հասնում Մարտունի քաղաքային, Վաղաշեն և Գեղիովիտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 23366 մ է:

Մարտունի քաղաքային, Գեղիովիտ և Ներքին Գետաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, առվով անցնում 79 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, առվով, թիվ 2-4 սահմանակետերով անցնում 389 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 398 մ, հասնում Մարտունի-Գեղիովիտ մարզային նշանակության ճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 522 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, թեքվում է հարավ-արևելք, թիվ 8 սահմանակետով անցնում 640 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, թեքվում է դեպի հարավ, թիվ 10-11 սահմանակետերով անցնում 470 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 13 սահմանակետով անցնում 257 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին, առվով շարունակվում դեպի հարավ-արևելք, թիվ 15-26 սահմանակետերով անցնում 2875 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը սարի լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 28 սահմանակետով անցնում 728 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 141 մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 372 մ, հասնում թիվ 31 սահմանակետին, թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 265 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 253 մ, հասնում թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, թիվ 34 սահմանակետով անցնում 695 մ, հասնում թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 36-42 սահմանակետերով անցնում 3527 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 44 սահմանակետով անցնում 213 մ, հասնում թիվ 45 սահմանակետին, ապա ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 46-49 սահմանակետերով անցնում 4717 մ, որտեղից թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, թիվ 51-52 սահմանակետերով անցնում 2896 մ, հասնում Մարտունի քաղաքային, Գեղիովիտ և Վաղաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19438 մ է:

## ՄԱՐՏՈՒՆԻ – ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՍԱՐՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»

Մարտունի քաղաքային, Ներքին Գետաշեն գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, դաշտային ճանապարհով թիվ 1 սահմանակետով անցնում 2378մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, ապա հարավ, թիվ 3 սահմանակետով անցնում 203մ, հասնում Մարտունի –Ներքին Գետաշեն միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք նշված ճանապարհով անցնում 253 մ հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից փողոցով թեքվում է դեպի հարավ և արևելք, թիվ 6 սահմանակետով անցնում 398մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը բնակավայրի եզրգծով, թիվ 8-9 սահմանակետերով անցնում 356մ, հասնում կաթսայատուն տանող ճանապարհի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, նշված ճանապարհով անցնում 100մ, հասնում թիվ 11 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվով, թիվ 12-18 սահմանակետերով անցնում 1600մ, հասնում Մարտունի քաղաքային, Ներքին Գետաշեն և Գեղիովիտ գյուղական, համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5285 մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ճամբարակի քաղաքային համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Տավուշի մարզին և «Բ»-«Գ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Վահան գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Արտանիշ գյուղական համայնքին, հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ Շորժա գյուղական համայնքին, հարավից և արևմուտքից «Զ»-«Է» հատվածով՝ Աղբերք գյուղական համայնքին, արևմուտքից «Է»-«Ա» հատվածով՝ Թթուջուր գյուղական համայնքին:

**ՃԱՄԲԱՐԱԿ – ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանների հետ:

**ՃԱՄԲԱՐԱԿ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

**ՃԱՄԲԱՐԱԿ – ՎԱՀԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Ճամբարակ քաղաքային, Վահան գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը սարի լանջով թեքվում է դեպի հարավ, թիվ 1 սահմանակետով անցնում 1095 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարի լանջով, թիվ 3-5 սահմանակետերով անցնում 2221 մ, հասնում Տորոսչայ գետի ափին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը գետի ոլորաններով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 7-52 սահմանակետերով անցնում 3523 մ, հասնում է թիվ 53 սահմանակետին: Թիվ 53

սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, անտառապատ լանջով թիվ 54 սահմանակետով անցնում 774 մ, հասնում ճամբարակ քաղաքային, Վահան և Արտանիշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7613 մ է:

#### **ՃԱՄԲԱՐԱԿ - ԱՐՏԱՆԻՇ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

ճամբարակ քաղաքային, Արտանիշ և Վահան գյուղական և համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1271 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5-11 սահմանակետերով անցնում 1657 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք արոտների եզրով, անցնում 1656 մ, հատելով դաշտային ճանապարհը հասնում թիվ 13 սահմանակետին, որտեղից արոտների միջով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 14 սահմանակետով անցնում 727 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 302 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից բլուրների գագաթներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 518 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 198 մ, հասնում ճամբարակ քաղաքային, Արտանիշ և Շորժա գյուղական և համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6329 մ է:

#### **ՃԱՄԲԱՐԱԿ – ՇՈՐՃԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

ճամբարակ քաղաքային, Շորժա և Աղբերք գյուղական համայնքների, տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բլուրներով թեքվում է դեպի արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 535մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 3-5 («Պիկշե-Պանդո» կոչվող եռանկյունաչափական կետը հանդիսանում է թիվ 5 սահմանակետը) սահմանակետերով անցնում 935 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 163 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-

արևելք, հատում դաշտային ճանապարհը, սարի լանջով, թիվ 8 սահմանակետով անցնում 1053 մ, հասնում ճամբարակ քաղաքային, Շորժա և Արտանիշ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ձ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2686 մ է:

### **ՃԱՄԲԱՐԱԿ - ԱՂԲԵՐՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ձ»-«Ե»**

ճամբարակ քաղաքային, Աղբերք և Թթուջուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ թիվ 1 սահմանակետով անցնում 1367 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից լանջերով թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 3 սահմանակետով անցնում 611 մ, հատելով ձորը, հասնում հաջորդ ձորի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք ապա հարավ-արևմուտք և հարավ-արևելք, թիվ 5-9 սահմանակետերով անցնում 2899 մ, հատելով ձորեր և ջրբաժաններ հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1176 մ, հասնում Կարա Փափախ կոչվող եռանկյունաչափական կետի, հետ համընկնող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 726 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, սարալանջով անցնում 300 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 14 սահմանակետով անցնում 1090 մ, հասնում է Սևան տանող ճանապարհի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, թիվ 16 սահմանակետով անցնում 1011 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, սարի լանջով անցնում 1279 մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք և թիվ 19-20 սահմանակետերով անցնում 812 մ, լեռնաշղթայով հասնում ճանապարհի հետ հատման տեղում գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 22-25 սահմանակետերով անցնում 1263 մ, հատելով դաշտային ճանապարհները և «Ագրիջա» եռանկյունաչափական կետը, հասնում ճամբարակ քաղաքային, Աղբերք և Շորժա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ձ» հանգուցային սահմանակետին:

«Ձ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12535 մ է:

## ՃԱՄԲԱՐԱԿ – ԹԹՈՒՋՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ա»

Ճամբարակ քաղաքային, Թթուջուր գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 747 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից լանջով թեքվում է հարավ-արևելք, անցնում 583 մ, հասնում բնական աղբյուրներից հոսող առուների հատման կետում գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 7-34 սահմանակետերով անցնում 1665 մ, հասնում Թթուջուր բնակավայրի հարավ-արևելյան եզրագծի մոտ գտնվող թիվ 35 սահմանակետին, ապա շրջանցելով բնակավայրը, թեքվում դեպի հարավ-արևմուտք, հարավ-արևելք, հյուսիս-արևմուտք և նորից հարավ-արևմուտք հատում Թթուջուր-Ճամբարակ միջհամայնքային ճանապարհը թիվ 36-41 սահմանակետերով անցնում 1577 մ, հասնում թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 43 սահմանակետով անցնում 793 մ, հասնում թիվ 44 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 159 մ, հասնում թիվ 45 սահմանակետին, ապա թեքվում հարավ-արևմուտք, անցնում 276 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 46 սահմանակետին: Թիվ 46 սահմանակետից սահմանագիծը թեք լանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 47-49 սահմանակետերով անցնում 1793 մ, հասնում թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 261 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 51 սահմանակետին, որտեղից թեք լանջերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 52-54 սահմանակետերով անցնում 1542 մ, հատելով ձորակը հասնում Ճամբարակ քաղաքային, Թթուջուր և Աղբերք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9395 մ է:

ՀԱԿԵԼՎԱԾ 15.4  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԶԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ազատ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սոթք գյուղական համայնքին, հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Կութ գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հարավից և արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով Նորաբակ գյուղական համայնքին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով Շատվան գյուղական համայնքին:

### **ԱԶԱՏ – ՍՈՒՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»**

Ազատ, Սոթք և Շատվան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1339 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, ապա առվով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 556 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, որտեղից թեքվում է կրկին հարավ-արևելք, անցնում 580 մ, հատելով Ազատ-Սոտք միջհամայնքային ճանապարհը, հասնում Ազատ, Սոթք և Կութ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2475 մ է:

### **ԱԶԱՏ – ԿՈՒԹ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»**

Ազատ, Սոթք և Կութ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 741 մ, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 48 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, հատում Կութ-Ազատ միջհամայնքային ճանապարհը, թիվ 5-9 սահմանակետերով անցնում 1436 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 161 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 12-13 սահմանակետերով անցնում 1237 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 174 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 15 սահմանակետին, որտեղից ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, թիվ 16-17 սահմանակետերով

անցնում 744 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է կրկին հարավ-արևելք, թիվ 19-20 սահմանակետերով անցնում 1295 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով (բարձրունքներով), թիվ 22-37 սահմանակետերով նույն ուղղությամբ անցնում է 4054 մ, հասնում Ազատ, Կուբ գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9890 մ է:

### **ԱԶԱՏ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

#### **ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

#### **ԱԶԱՏ – ՆՈՐԱԲԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»**

Ազատ, Նորաբակ և Շատվան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-28 սահմանակետերով անցնում 4357 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 29 սահմանակետին, այնուհետև ձորով թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 30 սահմանակետով անցնում 7786 մ, հասնում Ազատ, Նորաբակ գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12143 մ է:

#### **ԱԶԱՏ – ՇԱՏՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Ա»**

Ազատ, Շատվան և Սոթք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 1018 մ, հասնում Ազատ, Շատվան և

Նորաբակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1018 մ է:

ՀԱԿԵԼՎԱԾ 15.5  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱԽՊՐԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ախպրածոր գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավ-արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լուսակունք գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Գեղաքար գյուղական համայնքին, «Գ»-«Դ» հատվածով՝ Խաչաղբյուր գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով Մաքենիս գյուղական համայնքին:

### **ԱԽՊՐԱԶՈՐ – ԼՈՒՍԱԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Ախպրածոր, Լուսակունք և Մաքենիս գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 769 մ, հասնում Ախպրածոր, Լուսակունք և Գեղաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 769 մ է:

### **ԱԽՊՐԱԶՈՐ – ԳԵՂԱՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ախպրածոր, Լուսակունք և Գեղաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 282 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 2-3 սահմանակետերով անցնում 442 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ, թիվ 5-7 սահմանակետերով անցնում 1047 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնում 480 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, հատելով առուն և դաշտային ճանապարհը թիվ 11-13 սահմանակետերով անցնելով 1473 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 117 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 16 սահմանակետով անցնում 627 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, անցնում 136 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ, թիվ 19-23 սահմանակետերով անցնում 1182 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը

լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ և հարավ-արևմուտք, թիվ 25-42 սահմանակետերով անցնում 1552 մ, հասնում Ախպրաձոր, Գեղաքար և Խաչաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7339 մ է:

### **ԱԽՊՐԱՁՈՐ – ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Ախպրաձոր, Խաչաղբյուր և Գեղաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը հարթավայրով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 1015 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև բլրակներով թեքվում է դեպի հարավ, թիվ 3-9 սահմանակետերով անցնում 2414 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 11-14 սահմանակետերով անցնում 971 մ, հասնում Ախպրաձոր և Խաչաղբյուր գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4400 մ է:

### **ԱԽՊՐԱՁՈՐ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՊՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը հանընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ԱԽՊՐԱՁՈՐ – ՄԱՔԵՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Ախպրաձոր, Մաքենիս և Լուսակն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 2700 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 10 սահմանակետով անցնում 432 մ, հատելով Մաքենիս-Ախպրաձոր միջհամայնքային

ճանապարհը, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 12 սահմանակետով անցնում 378 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, ապա դաշտային ճանապարհով թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 14-18 սահմանակետերով անցնում 1620 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 20 սահմանակետով անցնում 528 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 21 սահմանակետին, թեքվում է հարավ-արևմուտք, առվով անցնում 467 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, թեքվում է հարավ-արևելք, անցնում 285 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 24 սահմանակետով անցնում 1006 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 26 սահմանակետով անցնում 477 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 28 սահմանակետով անցնում 1312 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 29 սահմանակետին, որտեղից առվով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 30-31 սահմանակետերով անցնում 1112 մ, հասնում թիվ 32 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 33 սահմանակետով անցնում 676 մ, հատելով առուն և դաշտային ճանապարհը, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 35-63 սահմանակետերով անցնում 2650 մ, հասնում թիվ 64 սահմանակետին, որտեղից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 65-79 սահմանակետերով անցնում 1984 մ, հասնում թիվ 80 սահմանակետին: Թիվ 80 սահմանակետից սահմանագիծը նույն ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հարավ և հարավ-արևելք, թիվ 81-98 սահմանակետերով անցնում 2834 մ, հասնում Ախպրաձոր, Մաքենիս գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18463 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.6  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՎՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ակունք գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վարդենիս քաղաքային համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Այրք գյուղական համայնքին, հյուսիս-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Նեռքին Շորժա գյուղական համայնքին, հյուսիսից «Դ»-«Ե» հատվածով՝ Վեռին Շորժա գյուղական համայնքին, հարավից «Ե»-«Զ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Խաչաղբյուր գյուղական համայնքին:

### **ԱԿՈՒՆՔ – ՎԱՐԴԵՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Ջրանցքի եզրին գտնվող Ակունք, Խաչաղբյուր գյուղական և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի արևելք, թիվ 1 սահմանակետով անցնում 838 մ, հասնում Սասրիկ ջրանցքի եզրին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից ջրանցքով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 3-8 սահմանակետերով անցնում 2212 մ, հատելով դաշտային ճանապարհը հասնում թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 96 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 11-23 սահմանակետերով անցնում 4174 մ, հատելով դաշտային ճանապարհը հասնում Ակունք, Այրք գյուղական համայնքների և Վարդենիս քաղաքային համայնքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7320 մ է:

### **ԱԿՈՒՆՔ – ԱՅՐՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ակունք, Այրք գյուղական և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի հարավ, թիվ 1-9 սահմանակետերով անցնում 2982 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 443 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 12 սահմանակետով անցնում 421 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 14-16 սահմանակետերով անցնում 979 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի

հարավ-արևելք, անցնում 324 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, թիվ 19 սահմանակետով անցնում 616 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, ապա բարձրունքներով, թիվ 21-22 սահմանակետերով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1540 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 24-28 սահմանակետերով անցնում 3029 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, որտեղից թեքվում է արևմուտք, անցնում 559 մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը բլրակներով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 31-36 սահմանակետերով անցնում 1821 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 37 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, առվով անցնում 6241 մ, հասնում Ակունք, Այրք և Ներքին Շորժա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18952 մ է:

#### **ԱԿՈՒՆՔ – ՆԵՐՔԻՆ ՇՈՐժԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Ակունք, Այրք և Ներքին Շորժա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 975 մ, հասնում Ակունք, Ներքին Շորժա և Վերին Շորժա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 975 մ է:

#### **ԱԿՈՒՆՔ – ՎԵՐԻՆ ՇՈՐժԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Ակունք, Ներքին Շորժա և Վերին Շորժա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 2434 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից դաշտային ճանապարհով թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 1390 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1972 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 7-15 սահմանակետերով անցնում 3735 մ, հասնում Ակունք, Վերին

Շորժա գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Չանրապետություն) տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:  
«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9531 մ է:

**ԱԿՈՒՆՔ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՉԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

«Ե» - «Զ» հատվածով սահմանագիծը համընկնում է Չայաստանի Չանրապետության և Ադրբեջանի Չանրապետության պետական սահմանի հետ:

**ԱԿՈՒՆՔ – ԽԱՀԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Ակունք, Խաչաղբյուր գյուղական և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ջրանցքի եզրին, սահմանագիծը ջրանցքով թեքվում է դեպի հարավ, թիվ 1 սահմանակետով անցնում 1325 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից ջրանցքով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 3 սահմանակետով անցնում 459 մ, հասնում ջրանցքի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ ապա հարավ-արևմուտք, թիվ 5-10 սահմանակետերով անցնում 2418 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին, որտեղից առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք և հարավ-արևելք, թիվ 12-16 սահմանակետերով անցնում 1997 մ, հասնում առվի և դաշտային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք և հարավ-արևելք, թիվ 18-26 սահմանակետերով անցնում 2651 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 28 սահմանակետով անցնում 874 մ, հասնում հին ամառանոցի մոտ գտնվող թիվ 29 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք և հարավ, թիվ 30-32 սահմանակետերով անցնում 2230 մ, հասնում թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատելով ձորը և դաշտային ճանապարհը, թիվ 34 սահմանակետով անցնում 1611 մ, հասնում թիվ 35 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 387 մ, հասնում թիվ 36 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 37 սահմանակետով

անցնում 1456 մ, հասնում թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, անցնում 3917 մ, հասնում Ակունք, Խաչաղբյուր գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19324 մ է:

ՀԱԿԵԼՎԱԾ 15.7  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՂԲԵՐՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Աղբերք գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է ճամբարակ քաղաքային համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Շորժա գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Սևանա լճին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Դրախտիկ գյուղական համայնքին, հյուսիսից «Ե»-«Ա» հատվածով՝ Թթուջուր գյուղական համայնքին:

### **ԱՂԲԵՐՔ – ՃԱՄԲԱՐԱԿ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Աղբերք, Թթուջուր գյուղական և ճամբարակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ թիվ 1 սահմանակետով անցնում 1367 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից լանջերով թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 3 սահմանակետով անցնում 611 մ, հատելով ձորը, հասնում հաջորդ ձորի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք ապա հարավ-արևմուտք և հարավ-արևելք, թիվ 5-9 սահմանակետերով անցնում 2899 մ, հատելով ձորեր և ջրբաժաններ հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1176 մ, հասնում Կարա Փափախ կոչվող եռանկյունաչափական կետի, հետ համընկնող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 726 մ, հասնում է թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, սարալանջով անցնում 300 մ, հասնում է թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 14 սահմանակետով անցնում 1090 մ, հասնում է Սևան տանող ճանապարհի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, թիվ 16 սահմանակետով անցնում 1011 մ, հասնում է թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում դաշտային ճանապարհը, սարի լանջով անցնում 1279 մ, հասնում է թիվ 18 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք և թիվ 19-20 սահմանակետերով անցնում 812 մ, լեռնաշղթայով հասնում ճանապարհի հետ հատման տեղում գտնվող թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 22-25 սահմանակետերով անցնում 1263 մ, հատելով դաշտային ճանապարհները և «Ագրիջա» եռանկյունաչափական կետը, հասնում Աղբերք, Շորժա գյուղական և ճամբարակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12535 մ է:

**ԱՂԲԵՐՔ – ՇՈՐԺԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Աղբերք, Շորժա գյուղական և ճամբարակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լեռնաշղթայով, թիվ 1 սահմանակետով անցնում 725 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ, սարի լանջով, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 1500 մ, հասնում է երկու դաշտային ճանապարհների խաչմերուկում գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք և թիվ 6-14 սահմանակետերով անցնելով 1450 մ, հասնում է թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 16-17 սահմանակետերով անցնում 624 մ, հասնում է լեռան գագաթին գտնվող թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 358 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, սարի լանջով, թիվ 20-25 սահմանակետերով անցնում 1247 մ, հատելով միջհամայնքային ճանապարհը, հասնում է թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում միջհամայնքային ճանապարհը, սարի լանջով, թիվ 27-32 սահմանակետերով անցնելով 1331 մ, հասնում է թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 34-37 սահմանակետերով անցնում 711 մ, հասնում միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող Աղբերք, Շորժա գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7946 մ է:

**ԱՂԲԵՐՔ – ՍԵՎԱՆԱ ԼԻՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Սևանա լճի ափին:

**ԱՂԲԵՐՔ – ԴՐԱԽՏԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Աղբերք, Դրախտիկ և Թթուջուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լեռնալանջով և բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 1792 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին: Թիվ 2

սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 3 սահմանակետով անցնում 2475 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լեռնաշղթայով անցնում 479 մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, լեռնաշղթայով, թիվ 6-9 սահմանակետերով անցնում 2771 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 11 սահմանակետով անցնում 793 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևմուտք, անցնում 183 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարի լանջով, թիվ 14-17 սահմանակետերով անցնում 2528 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը ձորով, Դալաչայ գետով թեքվում է դեպի հարավ, ապա արևմուտք, անցնում 3457 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, որտեղից նշված գետով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 20-25 սահմանակետերով անցնում 460 մ, հասնում Աղբերք, Դրախտիկ գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14939 մ է:

### **ԱՂԲԵՐՔ – ԹՅՈՒՋՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Աղբերք, Թթուջուր գյուղական և ճամբարակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1744 մ, հասնում Աղբերք, Թթուջուր և Դրախտիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1744 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.8  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՅՐՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Այրք գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ջաղացաձոր գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ներքին Շորժա

գյուղական համայնքին, հարավ-արևելքից, հարավից և արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Ակունք գյուղական համայնքին, հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Վարդենիս քաղաքային համայնքին:

### **ԱՅՐՔ – ՋԱՂԱԳԱԾՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Այրք, Ջաղացաձոր գյուղական և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 912 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 216 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 104 մ, հասնում Այրք-Ջաղացաձոր միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է հյուսիս, անցնում 76 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 8 սահմանակետով անցնում 432 մ, հասնում ճանապարհի և առվի հատման տեղում գտնվող թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 10-14 սահմանակետերով անցնում 2099 մ, հասնում Այրք, Ջաղացաձոր և Ն. Շորժա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3840 մ է:

### **ԱՅՐՔ – ՆԵՐՔԻՆ ՇՈՐժԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Այրք, Ջաղացաձոր և Ներքին Շորժա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևելք, անցնում 168 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, անցնում 250 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 512 մ, հատելով Այրք-Ն. Շորժա միջհամայնքային ճանապարհը, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է հարավ-արևելք, անցնում 243 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 654 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, թեքվում է հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 11-15 սահմանակետերով անցնելով 1682 մ, հասնում Այրք-Վ. Շորժա միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին: Այնուհետև սահմանագիծը

թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 17 սահմանակետով անցնում 270 մ, հասնում երկու ձորերի հատման տեղում գտնվող թիվ 18 սահմանակետին, որտեղից ձորով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 19,20 սահմանակետերով անցնում 564 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, թեքվում է հարավ-արևելք, անցնում 89 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ, անցնում 41 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, թեքվում է հարավ-արևելք, անցնում 238 մ, հասնում թիվ 24 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 54 մ, հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 311 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 26 սահմանակետին, ճանապարհով թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 512 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 338 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 29 սահմանակետով անցնում 349 մ, հասնում Այրք, Ներքին Շորժա և Ակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6276 մ է:

### **ԱՅՐՔ – ԱԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Այրք, Ակունք և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ, թիվ 1-9 սահմանակետերով անցնում 2982 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 443 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 12 սահմանակետով անցնում 421 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 14-16 սահմանակետերով անցնում 979 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 324 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, թիվ 19 սահմանակետով անցնում 616 մ, հասնում թիվ 20 սահմանակետին, ապա բարձունքներով, թիվ 21,22 սահմանակետերով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1540 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք,

թիվ 24-28 սահմանակետերով անցնում 3029 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, որտեղից թեքվում է արևմուտք, անցնում 559 մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը բլրակներով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 31-36 սահմանակետերով անցնում 1821 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 37 սահմանակետին, որտեղից առվով թեքվում է դեպի արևելք, ապա հյուսիս-արևելք, անցնում 6241 մ, հասնում Այրք, Ակունք և Ներքին Շորժա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18952 մ է:

### **ԱՅՐՔ – ՎԱՐՂԵՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Այրք, Ջաղացածոր գյուղական և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-6 սահմանակետերով անցնում 1812 մ, հատելով առուն հասնում է Վարդենիս-Այրք միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է կրկին դեպի հարավ-արևմուտք, անցնում 446 մ, հասնում Այրք, Ակունք գյուղական և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2258 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.9  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՅԳՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Այգուտ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գետիկ գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Մարտունի գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Դպրաբակ գյուղական համայնքին, հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Տավուշի մարզին:

### **ԱՅԳՈՒՏ - ԳԵՏԻԿ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Այգուտ, Գետիկ գյուղական համայնքների և Տավուշի մարզ տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարի թեք լանջով, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 724մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա կրկին թեքվում է հարավ-արևմուտք թիվ 8-14 սահմանակետ անցնում 837 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ- արևմուտք թիվ 16-20 սահմանակետերով անցնում 1727մ հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 22-26 սահմանակետերով անցնում 1046 մ հասնում Այգուտ, Մարտունի և Գետիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4335 մ է:

### **ԱՅԳՈՒՏ – ՄԱՐՏՈՒՆԻ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Այգուտ, Մարտունի և Գետիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք անցնում 159մ հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեք լանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 811մ հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 659մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղ միանում է առվին և առվով թեքվելով դեպի հարավ-արևմուտք, թիվ 4-5 սահմանակետերով անցնում 405մ հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք անցնում 334մ հասնում թիվ 7 սահմանակետին, թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 8-10 սահմանակետերով անցնում 562 հասնում է թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում հարավ-արևմուտք թիվ 11-14 սահմանակետերով անցնում 732մ հասնում է թիվ 15 սահմանակետին, թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ այնուհետև հարավ-արևմուտք թիվ 16-23 սահմանակետերով անցնում 715մ հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք անցնում 996մ հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ թիվ 26-27

սահմանակետերով անցնում է 1006մ հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք ապա հարավ-արևելք, թիվ 29-32 սահմանակետերով, անցնում է 575մ հասնում է թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք անցնում է 2678մ հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, այնուհետև հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք թիվ 35-37 սահմանակետերով անցնում 2743 մ, հասնում է թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք անցում 1497մ հասնում Այգուտ, Դպրաբակ և Մարտունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13872 մ է:

### **ԱՅԳՈՒՏ - ԴՊՐԱԲԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Գ»-«Դ»**

Այգուտ, Դպրաբակ համայնքների և Տավուշի մարզ տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 1-8 սահմանակետերով անցնում 1170 մ հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք թիվ 10 սահմանակետով անցնում 722 մ հասնում առվի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք առվի թիվ 12-43 սահմանակետերով անցնում 6160 մ հասնում թիվ 44 սահմանակետին, թիվ 44 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, ապա հարավ-արևմուտք թիվ 45 սահմանակետով անցնում 1045 մ հասնում թիվ 46 սահմանակետին, թիվ 46 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ- արևելք թիվ 47-53 սահմանակետերով անցնում 3475 մ հասնում թիվ 54 սահմանակետին, թիվ 54 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք անցնում 816 մ հասնում թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք անցնում 1254 մ հասնում Այգուտ, Դպրաբակ և Մարտունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 14642 մ է:

### **ԱՅԳՈՒՏ – ՏԱՎՈՒՇԻ ՍԱՐՁ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Դ»-«Ա»**

«Դ»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանների հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.10  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Անտառամեջ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ձորավանք գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Կալավան գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Ծովագյուղ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Տավուշի մարզին:

**ԱՆՏԱՌԱՄԵՋ – ՁՈՐԱՎԱՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Անտառամեջ, Ձորավանք գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1689 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, որից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, անտառի եզրով, թիվ 5-11 սահմանակետերով անցնելով 1477 մ, հասնում է գետի ափին գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է հարավ, թիվ 13-23 սահմանակետերով անցնում 2048 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը 25-27 սահմանակետերով շարունակվում է դեպի հարավ, անցնելով 1196 մ, հասնում Անտառամեջ, Ձորավանք և Կալավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6410 մ է:

#### **ԱՆՏԱՌԱՄԵՋ – ԿԱԼԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Անտառամեջ, Կալավան և Ձորավանք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լեռնալանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 587 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա նույն ուղղությամբ շարունակում բարձունքներով, թիվ 2-9 սահմանակետերով անցնում է 1601 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որտեղից լանջով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 1075 մ, հատելով առուն, հասնում լեռան գագաթին գտնվող Անտառամեջ, Կալավան և Ծովագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3263 մ է:

#### **ԱՆՏԱՌԱՄԵՋ – ԾՈՎԱԳՅՈՒԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Անտառամեջ, Կալավան և Ծովագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-6 սահմանակետերով անցնում 1208 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, այնուհետև կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, բարձրունքներով, թիվ 8-14 սահմանակետերով անցնում 1644 մ, հասնում Անտառամեջ, Ծովագյուղ գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2852 մ է:

**ԱՆՏԱՌԱՄԵՋ – ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐՁ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

«Դ»-«Ա» հատվածով սահմանագիծը համընկնում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանների հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.11  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐՁԻ ԱՍՏՂԱԶՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Աստղաձոր համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սևանա լճին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ջոլաքար համայնքին հարավից և արևմուտքից «Գ»-«Ա» հատվածով՝ Վաղաշեն համայնքին:

**ԱՍՏՂԱԶՈՐ – ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Սևանա լճի ափին:

## ԱՍՏՂԱԾՈՐ – ԶՈՒԱՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»

Աստղաձոր, Զուլաքար գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ, թիվ 1 սահմանակետով անցնում 1258 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, այնուհետև առվակով 3-19 սահմանակետերով անցնում 3166 մ, հատելով Զուլաքար-Աստղաձոր միջհամայնքային ճանապարհը հասնում թիվ 20 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 118 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 22-23 սահմանակետերով անցնում 811 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը առվով թիվ 25-28 սահմանակետերով անցնում է 386 մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հետո հարավ արևմուտք, թիվ 30-33 սահմանակետերով անցնում 908 մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, այնուհետև հարավ, թիվ 35-38 սահմանակետերով անցնում 356 մ, հասնում թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 40-42 սահմանակետերով անցնում 636 մ, հասնում թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հետո հարավ-արևմուտք, այնուհետև հարավ 44-60 սահմանակետերով անցնում 2998 մ, հասնում է թիվ 61 սահմանակետին: Թիվ 61 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, այնուհետև հարավ-արևմուտք, թիվ 62-76 սահմանակետերով անցնում 3791 մ, հասնում թիվ 77 սահմանակետին: Թիվ 77 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք թիվ 78-79 սահմանակետերով անցնում 2111 մ, հասնում թիվ 80 սահմանակետին: Թիվ 80 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 81-89 սահմանակետերով անցնում 1556 մ, հասնում Աստղաձոր, Վաղաշեն և Զուլաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18095 մ է:

## ԱՍՏՂԱԾՈՐ –ՎԱՂԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»

Աստղաձոր, Վաղաշեն գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի

հարավ, թիվ 1 սահմանակետով անցնում 1868 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև առվով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 3-5 սահմանակետերով անցնում 375մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 551մ, հասնում թիվ 7 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք թիվ 8 սահմանակետով անցնում 174մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 423մ հասնում թիվ 10 սահմանակետին այնուհետև թեքվում հարավ,ապա արևմուտք թիվ 11-16 սահմանակետերով անցնում 1023մ հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 169 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 19 սահմանակետով անցնում 319մ, հասնում թիվ 20 սահմանակետին, որտեղից դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 21-27 սահմանակետերով անցնում 1243 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, այդտեղից թեքվում է հարավ, անցնում 532 մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ և հարավ-արևելք, թիվ 30-33 սահմանակետերով անցնում 1832 մ, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 35-36 սահմանակետերով անցնում 1005մ, հասնում թիվ 37 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 132մ, հասնում թիվ 38 սահմանակետին, թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 39 սահմանակետով անցնում 474մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ, թիվ 41 սահմանակետով անցնում 337մ, հասնում թիվ 42 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 43 սահմանակետով անցնում 506մ, հասնում թիվ 44 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 45 սահմանակետով անցնում 363մ, հասնում թիվ 46 սահմանակետին,որտեղից թեքվում է հարավ անցնում 497մ հասնում թիվ 47 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք թիվ 48-49 սահմանակետերով անցնում 3850մ հասնում թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ այնուհետև հարավ-արևելք թիվ 51,52 սահմանակետերով անցնում 3569մ հասնում թիվ 53 սահմանակետին: Թիվ 53 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք անցնում 1074 մ հասնում Աստղածոր, Վաղաշեն և Զոլաքար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 20316 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.12  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՎԱԶԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ավագան գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Արփունք գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Նորակերտ գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Գեղամասար գյուղական համայնքին:

**ԱՎԱԶԱՆ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

**ԱՎԱԶԱՆ – ԱՐՓՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Ավազան, Արփուհնք գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-22 սահմանակետերով անցնում 4945 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի հարավ, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 1608 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 169 մ, հատելով ձորը, հասնում լանջի վրա գտնվող թիվ 27 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, թիվ 28 սահմանակետով անցնում 929 մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 30-31 սահմանակետերով անցնում 1216 մ, հասնում Ավազան, Արփուհնք և Նորակերտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8867 մ է:

#### **ԱՎԱԶԱՆ – ՆՈՐԱԿԵՐՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Ավազան, Նորակերտ և Գեղամասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 339 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 2 սահմանակետով անցնում 868 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս, անցնում 224 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 235 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 6-10 սահմանակետերով անցնում 1269 մ, հատելով Նորակերտ-Գեղամասար միջհամայնքային ճանապարհը և ձորը, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևելք, թիվ 12-19 սահմանակետերով անցնում 930 մ, հասնում Ավազան, Նորակերտ և Արփուհնք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3865 մ է:

#### **ԱՎԱԶԱՆ – ԳԵՂԱՄԱՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Ավագան, Գեղամասար գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեք լանջերով, բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 1-12 սահմանակետերով անցնում 2386 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ձորով անցնում 1516 մ, հասնում թիվ 14 սահմանակետին, որտեղից բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 15-21 սահմանակետերով անցնում 1712 մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 364 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 24-35 սահմանակետերով անցնում 3422 մ, հասնում թիվ 36 սահմանակետին, որտեղից լանջով նույն ուղղությամբ, թիվ 37-38 սահմանակետերով անցնում է 1633 մ, հասնում Ավագան, Գեղամասար և Արփունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11033 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.13  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԵԳՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Արեգունի գյուղական համայնքը գտնվում է մարզի արևելյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Գեղամասար գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Սևանա լճին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով Դարանակ գյուղական համայնքին:

### **ԱՐԵԳՈՒՆԻ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

#### **ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ԱՐԵԳՈՒՆԻ – ԳԵՂԱՄԱՍԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Արեգունի, Գեղամասար գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 5470 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 340 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 3-14 սահմանակետերով անցնում 3816 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 664 մ, հասնում Արեգունի, Գեղամասար գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10290 մ է:

#### **ԱՐԵԳՈՒՆԻ – ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Սևանա լճի ափին:

#### **ԱՐԵԳՈՒՆԻ – ԴԱՐԱՆԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Արեգունի, Դարանակ գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 1089 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 1239 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը կրկին բարձրունքներով թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 1231 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս արևմուտք, թիվ 9 սահմանակետով անցնում 389 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ, թիվ 11 սահմանակետով անցնում 793 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 13 սահմանակետով

անցնում 690 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 15-19 սահմանակետերով անցնում 2307 մ, հատելով Երևան-Վարդենիս հանրապետական նշանակության ճանապարհը, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին հարավ-արևմուտք, անցնում 409 մ, հասնում Արեգունի, Դարանակ գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8147 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.14  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԾՎԱՆԻՍՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Արծվանիստի գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սևանա լճին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Կարճաղբյուր գյուղական համայնքին, հարավից և արևմուտքից «Գ»-«Ա» հատվածով՝ Ծովինար գյուղական համայնքին:

### **ԱՐԾՎԱՆԻՍՏ – ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Սևանա լճի ափին:

### **ԱՐԾՎԱՆԻՍՏ – ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Արծվանիստ, Կարճաղբյուր գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ, անցնում 555 մ, հասնում Մարտունի-Վարդենիս հանրապետական նշանակության ճանապարհի եզրին գտնվող

թիվ 1 սահմանակետին, որտեղից դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 2-3 սահմանակետերով անցնում 346 մ, հասնում Կարճաղբյուր, Արծվանիստ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, նշված ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 298 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, այնուհետև առվով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 1121 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա կրկին թեքվում դեպի հարավ-արևելք, հարավ և հարավ-արևմուտք, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 189 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 10-16 սահմանակետերով անցնում 1943 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 18 սահմանակետով անցնում 129 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ և հարավ-արևմուտք, թիվ 20-22 սահմանակետերով անցնում 830 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 24-29 սահմանակետերով անցնում 1791 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում է թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է նույն ուղղությամբ, թիվ 31-35 սահմանակետերով անցնում 2900 մ, հատելով առուն, հասնում 2557.0 մ նիշ ունեցող «Գյունբեզ» լեռան գագաթին գտնվող եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է թիվ 36 սահմանակետը: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 37-41 սահմանակետերով անցնում 2651 մ, հասնում թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեք լանջերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1041 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 43 սահմանակետին, որտեղից լանջերով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 44-47 սահմանակետերով անցնում 2217 մ, հատելով ձորը, հասնում թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 49-50 սահմանակետերով անցնում 1222 մ, հասնում թիվ 51 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է հարավ-արևմուտք, բարձրունքներով, թիվ 52-59 սահմանակետերով անցնում 2032 մ, հասնում Արծվանիստ, Ծովինար և Կարճաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19265 մ է:

**ԱՐԾՎԱՆԻՍՏ – ԾՈՎԻՆԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»**

Արծվանիստ, Ծովինար գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 221 մ, հասնում Մարտունի-Վարդենիս հանրապետական նշանակության ճանապարհի և Արփա-Սևան ջրանցքի վրա կառուցված կամուրջի հատման տեղում գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, թիվ 2-21 սահմանակետերով անցնում 3373 մ, հասնում է «Սունիսար» եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է թիվ 22 սահմանակետը, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 23-27 սահմանակետերով անցնում 1048 մ, հասնում է թիվ 28 սահմանակետին, այնուհետև դաշտային ճանապարհով թեքվում է դեպի արևելք, թիվ 29-31 սահմանակետերով անցնում 948 մ, հասնում է թիվ 32 սահմանակետին, որտեղից գետով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 33-63 սահմանակետերով անցնում 5158 մ, հասնում է թիվ 64 սահմանակետին, ապա դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևելք, թիվ 65-66 սահմանակետերով անցնում 1375 մ, հասնում է թիվ 67 սահմանակետին: Թիվ 67 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 357 մ, հասնում թիվ 68 սահմանակետին, որտեղից ճանապարհով թեքվում է հարավ, թիվ 69-70 սահմանակետերով անցնում 832 մ, հասնում թիվ 71 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, անցնում 79 մ, հասնում թիվ 72 սահմանակետին: Թիվ 72 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 73-79 սահմանակետերով անցնում 1742 մ, հասնում թիվ 80 սահմանակետին: Թիվ 80 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 81 սահմանակետով անցնում 1623 մ, հասնում թիվ 82 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 818 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 83 սահմանակետին: Թիվ 83 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 84-108 սահմանակետերով անցնում 2989 մ, հասնում թիվ 109 սահմանակետին, այնուհետև թեք լանջով թեքվում է արևելք, անցնում 902 մ, հասնում Արծվանիստ, Ծովինար և Կարճաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 21464 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՆԻՇ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Արտանիշ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Վահան գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Ջիլ գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Սևանա լճին հարավից և արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Շորժա գյուղական համայնքին, «Զ»-«Ա» հատվածով՝ ճամբարակ քաղաքային համայնքին:

### **ԱՐՏԱՆԻՇ – ՎԱՀԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Արտանիշ, Վահան գյուղական և ճամբարակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1556 մ, հատելով ձորեր և դաշտային ճանապարհներ, հասնում թիվ 3 սահմանակետին, որտեղից լանջով թեքվում է հյուսիս, անցնում 414 մ, հասնում թիվ 4

սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի արևելք, անցնում թիվ 5-11 սահմանակետերով 2569 մ, հասնում Արտանիշ, Վահան գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4539 մ է:

**ԱՐՏԱՆԻՇ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

«Բ» - «Գ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

**ԱՐՏԱՆԻՇ – ՋԻԼ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Արտանիշ, Ջիլ գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 268 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 1314 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 133 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 5 սահմանակետով անցնում 471 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 7-10 սահմանակետերով անցնում 2962 մ, հասնում թիվ 11 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 220 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, անցնում 1133 մ, հասնում ճանապարհի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 166 մ, հասնում Արտանիշ, Ջիլ գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6667 մ է:

**ԱՐՏԱՆԻՇ – ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Սևանա լճի ափին:

## **ԱՐՏԱՆԻՇ – ՇՈՐԺԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Արտանիշ, Շորժա գյուղական և ճամբարակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 523 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ ապա հարավ-արևմուտք, առվով, թիվ 2-35 սահմանակետերով անցնելով 3085 մ, հասնում է թիվ 36 սահմանակետին, այնուհետև միջհամայնքային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 37-39 սահմանակետերով անցնում 883 մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք և թիվ 41-45 սահմանակետերով անցնելով 1110 մ, հասնում է թիվ 46 սահմանակետին: Թիվ 46 սահմանակետից սահմանագիծը թեք լանջերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 47-49 սահմանակետերով անցնում 1931 մ, հասնում թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք, անցնում 812 մ, հասնում թիվ 51 սահմանակետին, այնուհետև բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 52-56 սահմանակետերով անցնում 4468 մ, հասնում Արտանիշ, Շորժա գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12811 մ է:

## **ԱՐՏԱՆԻՇ – ՃԱՄԲԱՐԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Արտանիշ, Վահան գյուղական և ճամբարակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1271 մ, հասնում թիվ 4 սահմանակետին: Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5-11 սահմանակետերով անցնում 1657 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք արոտների եզրով, անցնում 1656 մ, հատելով դաշտային ճանապարհը հասնում թիվ 13 սահմանակետին, որտեղից արոտների միջով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 14 սահմանակետով անցնում 727 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 302 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից բլուրների զազաթներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 518 մ, հասնում թիվ 17

սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 198 մ, հասնում Արտանիշ, Շորժա գյուղական և ճամբարակ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6329 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.16  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՓՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Արփույնք գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավ-արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Կախակն գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով Փոքր Մասրիկ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով Նորակերտ գյուղական համայնքին, «Ե»-«Ա» հատվածով Ավազան գյուղական համայնքին:

#### **ԱՐՓՈՒՆՔ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

#### **ԱՐՓՈՒՆՔ – ԿԱԽԱԿՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Բ»-«Գ»**

Արփույնք, Կախակն գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով, բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-

արևմուտք, հարավ, ապա արևմուտք, անցնում 3937 մ, հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 2-11 սահմանակետերով անցնում 3086 մ, հատելով Կախակն-Արփունք միջհամայնքային ճանապարհը, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 463 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Փոքր Մասրիկ-Կախակն միջհամայնքային ճանապարհով անցնում 635 մ, հասնում Արփունք, Կախակն և Փոքր Մասրիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8121 մ է:

#### **ԱՐՓՈՒՆՔ – ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Գ»-«Դ»**

Արփունք, Փոքր Մասրիկ և Նորակերտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում Փոքր Մասրիկ-Արփունք միջհամայնքային ճանապարհը, առվով, թիվ 1-9 սահմանակետերով անցնում 2160 մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, ապա թեքվելով հյուսիս-արևելք, թիվ 11-18 սահմանակետերով անցնում 2200 մ, հասնում Արփունք, Փոքր Մասրիկ և Կախակն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4360 մ է:

#### **ԱՐՓՈՒՆՔ – ՆՈՐԱԿԵՐՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Դ»-«Ե»**

Արփունք, Նորակերտ և Ավազան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1364 մ, հասնում Արփունք, Նորակերտ և Փոքր Մասրիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1364 մ է:

#### **ԱՐՓՈՒՆՔ – ԱՎԱԶԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ «Ե»-«Ա»**

Արփունք, Ավազան գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-22 սահմանակետերով անցնում 4945 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում

է դեպի հարավ, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 1608 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 169 մ, հատելով ձորը, հասնում լանջի վրա գտնվող թիվ 27 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, թիվ 28 սահմանակետով անցնում 929 մ, հասնում թիվ 29 սահմանակետին: Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 30-31 սահմանակետերով անցնում 1216 մ, հասնում Արփուկնք, Ավազան և Նորակերտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8867 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.17  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԿՈՒՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Բերդկուկնք գյուղական համայնքը գտնվում մարզի արևմտյան մասում :

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սևանա լճին, հարավից և արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով` Հայրավանք գյուղական համայնքին, հյուսիսից «Գ»-«Ա» հատվածով` Լճափ գյուղական համայնքին:

### **ԲԵՐԴԿՈՒՆՔ – ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Սևանա լճի ափին:

### **ԲԵՐԴԿՈՒՆՔ – ՀԱՅՐԱՎԱՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Բ»-«Գ»**

Բերդկուկնք, Հայրավանք գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 233 մ, հանգստյան տան սահմանապատի մոտով, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 4-17 սահմանակետերով անցնում 7707 մ, հատելով Սևան-Գավառ հին և Սևան-Գավառ հանրապետական նշանակության նոր ճանապարհները, հասնում թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը բլուրներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 19 սահմանակետով անցնում 607մ, հասնում թիվ 20 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի արևմուտք, անցնում 271մ հասնում թիվ 21 սահմանակետին, որից հետո կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք թիվ 22-23 սահմանակետերով անցնում 880մ հասնում Բերդկուկնք,

Հայրավանք և Լճափ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9699 մ է:

### **ԲԵՐՂԿՈՒՆՔ – ԼՃԱՓ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՆԵՐԸ՝ «Գ»-«Ա»**

Բերդկունք, Լճափ գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 643 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է կրկին դեպի հարավ-արևմուտք, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 923 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը բլուրներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 10-15 սահմանակետերով անցնում 6906 մ, հատելով դաշտային և Լճափ-Բերդկունք միջհամայնքային ճանապարհները, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 1280 մ, հասնում Բերդկունք, Լճափ գյուղական և Հայրավանք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9752 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՆՁԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գանձակ գյուղական համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գավառ քաղաքային համայնքին, «Բ»-«Գ» հատվածով՝ Կարմիրգյուղ գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Սարուխան գյուղական համայնքին, հարավից «Դ»-«Ե» հատվածով՝ Արարատի մարզին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Ծաղկաշեն գյուղական համայնքին:

### **ԳԱՆՁԱԿ – ԳԱՎԱՌ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Գանձակ, Ծաղկաշեն գյուղական և Գավառ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Գելի ձոր գետով թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 1-12 սահմանակետերով անցնում 2865 մ, հատելով Գանձակ-Գավառ միջհամայնքային ճանապարհը, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի արևելք, թիվ 14-21 սահմանակետերով անցնում 1444 մ, հասնում Գավառ գետի ափին գտնվող Գանձակ, Կարմիրգյուղ գյուղական և Գավառ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4309 մ է:

### **ԳԱՆՁԱԿ – ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Գանձակ, Կարմիրգյուղ գյուղական և Գավառ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 531 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 2-5 սահմանակետերով անցնում 1500 մ, հասնում Գանձակ, Կարմիրգյուղ և Սարուխան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2031 մ է:

#### **ԳԱՆՁԱԿ – ՍԱՐՈՒԽԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Գանձակ, Կարմիրգյուղ և Սարուխան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 61 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 1364 մ, հատելով Սարուխան-Գանձակ միջհամայնքային ճանապարհը, հասնում գետի ափին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 713 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 2426 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 6 սահմանակետով անցնում 323 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 8-22 սահմանակետերով անցնում 4896 մ, հասնում թիվ 23 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 272 մ, հատելով առուն, դաշտային ճանապարհը, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեք լանջով, ապա դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 25 սահմանակետով անցնում 1912 մ, հասնում թիվ 26 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թեք լանջով, ապա բլուրներով, թիվ 27-35 սահմանակետերով անցնում 3877 մ, հասնում թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծը թեք լանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 535 մ, հասնում գետի ափին գտնվող թիվ 37 սահմանակետին: Թիվ 37 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 95 մ, հասնում թիվ 38 սահմանակետին, այնուհետև բարձրունքներով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 39-46 սահմանակետերով անցնում 1173 մ, հասնում ձորակի եզրին գտնվող թիվ 47 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 48-49

սահմանակետերով անցնում 195մ, հասնում թիվ 50 սահմանակետին: Թիվ 50 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 51-52 սահմանակետերով անցնում 3310 մ, հասնում Գանձակ, Սարուխան գյուղական համայնքների և Արարատի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 21152 մ է:

### **ԳԱՆՁԱԿ – ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը հանընկնում է Գեղարքունիքի և Արարատի մարզերի սահմանների հետ:

### **ԳԱՆՁԱԿ – ԾԱՂԿԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Գանձակ, Ծաղկաշեն գյուղական և Գավառ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է ձորի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք թիվ 1 սահմանակետով անցնում 1543 մ, հատելով ձորեր, ձորակներ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին, որտեղից լանջով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 3-4 սահմանակետով անցնում 1038 մ, հատելով ձորակներ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին, թիվ 5 սահմանակետից սահմանագիծը լանջերով, ապա բլրակներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 6 սահմանակետով անցնում 594 մ, հատելով դաշտային ճանապարհները և առուները, հասնում թիվ 7 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 187մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1399մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 509մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 11-18 սահմանակետերով, թեք լանջով հատելով ձորեր, առուներ, անցնում է 1822 մ, հասնում ջրբաժանի վրա գտնվող թիվ 19 սահմանակետին, ջրբաժանով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 103 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը կրկին ջրբաժանով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 21-25 սահմանակետերով անցնում 4337 մ, հատելով դաշտային ճանապարհները

և առում հասնում թիվ 26 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 2011 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 28 սահմանակետով անցնում 2723 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 30-41 սահմանակետերով անցնում 1316մ, հասնում թիվ 42 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 43-46 սահմանակետերով անցնում 304մ, հասնում թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը թիվ 48 սահմանակետով, հատելով ձորը, դաշտային ճանապարհը, անցնում է 121 մ, հասնում Գանձակ, Ծաղկաշեն գյուղական համայնքների և Արարատի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18007 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գեղամավան գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ծովագյուղ գյուղական համայնքին, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Վարսեր գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Ծաղկունք գյուղական համայնքին արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով Սևան քաղաքային (Գագարին) և «Ե»-«Զ» հատվածով Ծաղկունք գյուղական համայնքներին, հյուսիսից «Զ»-«Է» հատվածով Դդմաշեն և «Է»-«Ա» հատվածով Սեմյոնովկա գյուղական համայնքներին:

### **ԳԵՂԱՄԱՎԱՆ – ԾՈՎԱԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Գեղամավան, Ծովագյուղ և Սեմյոնովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1579 մ, հասնում է 2381.8մ նիշ ունեցող լեռան գագաթին գտնվող եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է թիվ 4 սահմանակետը, որտեղից բարձրունքներով թեքվում է հարավ-արևելք, թիվ 5-8 սահմանակետերով անցնում 2280 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևելք, թիվ 10-11 սահմանակետերով անցնում 2321 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 2480 մ, հասնում ժայռի վրա գտնվող թիվ 13 սահմանակետին, ապա ժայռով թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 155 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14

սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 15 սահմանակետով անցնում 760 մ, հասնում Գեղամավան, Ծովագյուղ և Վարսեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9575 մ է:

### **ԳԵՂԱՄԱՎԱՆ – ՎԱՐՍԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Գեղամավան, Վարսեր և Ծովագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, սարի լանջով անցնում 414 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա լանջով թեքվում է հարավ արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 1277 մ հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ճանապարհով, թիվ 4 սահմանակետով անցնում 490 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, 1924 մ նիշ ունեցող բարձունքով, թիվ 6 սահմանակետով անցնում 464 մ հատելով Գեղամավան-Վարսեր միջհամայնքային ճանապարհը, հասնում է թիվ 7 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1051 մ հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 9-10 սահմանակետերով անցնելով 936 մ հատելով երկաթգիծը, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 12 սահմանակետով անցնում 611 մ, հատելով Երևան-Սևան հանրապետական նշանակության ճանապարհը, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 369 մ, հասնում 2003 մ նիշ ունեցող լեռան գագաթին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 15 սահմանակետով անցնում 1776 մ, հասնում դաշտային ճանապարհների խաչմերուկում գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 17-22 սահմանակետերով անցնում 1961 մ հասնում թիվ 23 սահմանակետին, որտեղից դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 802 մ, հասնում Գեղամավան, Վարսեր և Ծաղկունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10154 մ է:

### **ԳԵՂԱՄԱՎԱՆ – ԾԱՂԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Գեղամավան, Ծաղկունք գյուղական և Սևան (Գագարին) քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը իջնում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 1966 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որից հետո թեքվելով հարավ-արևելք, անցնում 635 մ հասնում է Գեղամավան, Ծաղկունք և Վարսեր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2601 մ է:

### **ԳԵՂԱՄԱՎԱՆ – ՍԵՎԱՆ (ԳԱԳԱՐԻՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Գեղամավան, Ծաղկունք գյուղական և Սևան (Գագարին) քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բարձրանում է դեպի հյուսիս-արևելք, ապա հարավ-արևելք թիվ 1 սահմանակետով անցնում 1178 մ հասնում թիվ 2 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 3-7 սահմանակետերով անցնում 1257 մ հասնում թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք 9-18 սահմանակետերով անցնում 977 մ հասնում Գեղամավան, Ծաղկունք գյուղական և Սևան (Գագարին) քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3412 մ է:

### **ԳԵՂԱՄԱՎԱՆ – ԾԱՂԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Գեղամավան, Դոմաշեն և Ծաղկունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք անցնում թեք լանջով 616 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է հարավ-արևելք, անցնում 1027 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվելով հյուսիս-արևելք, անցնում է 347 մ, հասնում թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով թիվ 4-5 սահմանակետերով 543 մ, հասնում է ձորում գտնվող թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք ապա հարավ-արևմուտք ձորով, թիվ 6-82

սահմանակետերով անցնում 9981 մ, հասնում Յրազդան գետի ափին գտնվող թիվ 83 սահմանակետին, որտեղից թեքվում է արևմուտք, Յրազդան գետով, թիվ 83-101 սահմանակետերով անցնում 2790 մ, հասնում թիվ 102 սահմանակետին, որտեղից կտրուկ թեքվում է հարավ, թիվ 102-104 սահմանակետերով անցնում 2292 մ, հասնում Գեղամավան, Ծաղկունք գյուղական և Սևան (Գագարին) քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 17952 մ է:

#### **ԳԵՂԱՄԱՎԱՆ – ԴՊՄԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ե»**

Գեղամավան, Սեյժոնովկա և Դոմաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1008 մ, հասնում բլրի գագաթին գտնվող Գեղամավան, Դոմաշեն և Ծաղկունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1008 մ է:

#### **ԳԵՂԱՄԱՎԱՆ – ՍԵՄՅՈՆՈՎԿԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Գեղամավան, Սեյժոնովկա և Դոմաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1469 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4-6 սահմանակետերով անցնում 1778 մ, հասնում Գեղամավանի, Սեյժոնովկայի և Ծովագյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3249 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գեղամասար գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ավազան գյուղական համայնքին, արևելքից և հարավ-արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Նորակերտ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Սևանա լճին, արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով Արեգունի գյուղական համայնքին:

### **ԳԵՂԱՄԱՍԱՐ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ԳԵՂԱՄԱՍԱՐ – ԱՎԱԶԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Գեղամասար, Ավազան գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեք լանջերով, բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 1-12 սահմանակետերով անցնում 2386 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, ձորով անցնում 1516 մ, հասնում թիվ 14

սահմանակետին, որտեղից բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 15-21 սահմանակետերով անցնում 1712 մ, հասնում թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 364 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 24-35 սահմանակետերով անցնում 3422 մ, հասնում թիվ 36 սահմանակետին, որտեղից լանջով նույն ուղղությամբ, թիվ 37-38 սահմանակետերով անցնում է 1633 մ, հասնում Գեղամասար, Ավազան և Նորակերտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11033 մ է:

### **ԳԵՂԱՄԱՍԱՐ – ՆՈՐԱԿԵՐՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Գեղամասար, Նորակերտ և Ավազան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 256 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 604 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, Գեղամասար-Ծովակ միջհամայնքային ճանապարհով, թիվ 4-8 սահմանակետերով անցնում 3778 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որից հետո կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք Վարդենիս-Սևան հանրապետական նշանակության ավտոճանապարհով, թիվ 10-12 սահմանակետով անցնում 3252 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, այնուհետև թեքվում է թեքվում է դեպի արևմուտք, անցնում 1134 մ, հասնում Գեղամասար, Նորակերտ գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9024 մ է:

### **ԳԵՂԱՄԱՍԱՐ – ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը հանընկնում է Սևանա լճի ափին:

### **ԳԵՂԱՄԱՍԱՐ – ԱՐԵԳՈՒՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Գեղամասար, Արեգունի գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային

սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 5470 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 340 մ, հասնում թիվ 2 սահմանակետին: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 3-14 սահմանակետերով անցնում 3816 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 664 մ, հասնում Գեղամասար, Արեգունի գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10290 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գեղարքունիք գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կարմիրգյուղ գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Սևանա լճին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Երանոս գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Արարատի մարզին, արևմուտքից և հյուսիսից «Ե»-«Ա» հատվածով՝ Լանջաղբյուր գյուղական համայնքին:

### **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ – ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Գեղարքունիք, Լանջաղբյուր և Կարմիրգյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է Գավառ-Կարմիրգյուղ միջհամայնքային ճանապարհների եզրին, սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 955 մ, հասնում Սևան-Վարդենիս հանրապետական նշանակության ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հյուսիս-արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 1251 մ, հատելով Սևան-Մարտունի Հանրապետական նշանակության ճանապարհը, հասնում Գեղարքունիք, Կարմիրգյուղ գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2206 մ է:

### **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ – ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը համընկնում է Սևանա լճի ափին:

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ – ԵՐԱՆՈՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»

Գեղարքունիք, Երանոս գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 1-14 սահմանակետերով անցնում 1625 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս, թիվ 16-19 սահմանակետերով անցնում 831 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 127 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա բլուրների գագաթներով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 22-24 սահմանակետերով անցնում 1411 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, որտեղից ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 26-41 սահմանակետերով անցնում 3120 մ, հասնում թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 43-44 սահմանակետերով անցնում 779.0մ, հասնում թիվ 45 սահմանակետին, այնուհետև բլուրների գագաթներով թեքվում հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 46 սահմանակետով անցնում 97 մ, հասնում թիվ 47 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 70 մ, հասնում թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք թիվ 49-56 սահմանակետերով անցնում 1698 մ, հասնում թիվ 57 սահմանակետին: Թիվ 57 սահմանակետից սահմանագիծը բարձրունքների գագաթներով թեքվում է արևմուտք, ապա հյուսիս արևմուտք, թիվ 58 սահմանակետով անցնում 955 մ, հասնում թիվ 59 սահմանակետին, այնուհետև գագաթներով թեքվում է հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 60 սահմանակետով անցնում 685 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 61 սահմանակետին: Թիվ 61 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է հարավ-արևմուտք, 62-72 սահմանակետերով անցնում 1404 մ, հասնում թիվ 73 սահմանակետին: Թիվ 73 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 185 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 74 սահմանակետին, որտեղից ձորով թեքվում է արևմուտք, ապա հարավ-արևմուտք, անցնում 4372 մ, հասնում թիվ 75 սահմանակետին, ապա լանջերով, ջրբաժաններով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 76-85 սահմանակետերով անցնում 4593 մ, հասնում Երանոս, Գեղարքունիք գյուղական համայնքների և Արարատի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 21952 մ է:

## **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ – ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» սահմանագիծը համընկնում է Գեղարքունիքի և Արարատի մարզերի սահմանների հետ:

## **ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ – ԼԱՆՁԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Ա»**

Գեղարքունիք, Լանջաղբյուր և Կարմիրգյուղ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետերով անցնում 265 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 265 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 4-7 սահմանակետերով անցնում 2127 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 9-21 սահմանակետերով անցնելով 2092 մ, հատելով լիճը, հասնում ժայռի մոտ գտնվող թիվ 22 սահմանակետին: Թիվ 22 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 23 սահմանակետով անցնում 702 մ, հասնում Գավառ-Գեղարքունիք միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 75 մ, հասնում Գեղարքունիք գետի ափին գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 26-51 սահմանակետերով անցնում 5400 մ, հասնում թիվ 52 սահմանակետին: Թիվ 52 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 53 սահմանակետով անցնում 1202 մ, հասնում թիվ 54 սահմանակետին, որտեղից լանջով թեքվում է հարավ-արևելք, անցնում 318 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 55 սահմանակետին, այնուհետև ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 56-58 սահմանակետերով անցնում 5557 մ, հասնում թիվ 59 սահմանակետին: Թիվ 59 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 60,61 սահմանակետերով անցնում 1002 մ, հասնում թիվ 62 սահմանակետին: Թիվ 62 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 63-64 սահմանակետերով անցնում 3348 մ, հասնում

Գեղարքունիք, Լանջաղբյուր գյուղական համայնքների և Արարատի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 22353 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.22  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՍԱՐՁԻ ԳԵՂԱՔԱՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գեղաքար գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը արևելքից և հարավից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Խաչաղբյուր գյուղական համայնքին, արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով՝ Ախպրաձոր գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Գ»-«Ա» հատվածով՝ Լուսակունք գյուղական համայնքին:

### **ԳԵՂԱՔԱՐ – ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Գեղաքար, Խաչաղբյուր և Լուսակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-6 սահմանակետերով անցնելով 1972 մ, հատելով Գեղաքար-Խաչաղբյուր միջհամայնքային ճանապարհը, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 8-15 սահմանակետերով անցնում 3967 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 354 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 18 սահմանակետով անցնում 806 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 19 սահմանակետին, որտեղից դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 585 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 21-27 սահմանակետերով անցնում 1277 մ, հասնում թիվ 28 սահմանակետին, որտեղից թեք լանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 29-30 սահմանակետերով անցնում 509 մ, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 32-41 սահմանակետերով անցնում 1144 մ, հասնում թիվ 42 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 645 մ, հասնում Գեղաքար, Խաչաղբյուր

և Ախպրածոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11260 մ է:

**ԳԵՂԱՔԱՐ – ԱԽՊՐԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Գեղաքար, Ախպրածոր և Լուսակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 282 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 2-3 սահմանակետերով անցնում 442 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ, թիվ 5-7 սահմանակետերով անցնում 1047 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, թիվ 9 սահմանակետով անցնում 480 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, հատելով առուն և դաշտային ճանապարհը թիվ 11-13 սահմանակետերով անցնելով 1473 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 117 մ, հասնում թիվ 15 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 16 սահմանակետով անցնում 627 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, ապա թեքվում է արևելք, անցնում 136 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 18 սահմանակետին: Թիվ 18 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ, թիվ 19-23 սահմանակետերով անցնում 1182 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ և հարավ-արևմուտք, թիվ 25-42 սահմանակետերով անցնում 1552 մ, հասնում Գեղաքար, Ախպրածոր և Խաչաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7339 մ է:

**ԳԵՂԱՔԱՐ – ԼՈՒՍԱԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»**

Գեղաքար, Լուսակունք և Խաչաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 2314 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 74 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 229 մ, հասնում

Գեղաքար, Լուսակունք և Ախպրաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2617 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.23  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂՅՈՎԻՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գեղիովիտ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում:

Համայնքը հյուսիս-արևելքից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Մարտունի քաղաքային համայնքին, հարավ-արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Վաղաշեն գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Վայոց Ձորի մարզին, հարավ-արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով Արարատի մարզին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Մաղինա գյուղական համայնքին, «Զ»-«Ա» հատվածով՝ Ներքին Գետաշեն գյուղական համայնքին:

### **ԳԵՂՅՈՎԻՏ – ՄԱՐՏՈՒՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Գեղիովիտ, Ներքին Գետաշեն գյուղական և Մարտունի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, առվով անցնում 79 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, առվով, թիվ 2-4 սահմանակետերով անցնում 389 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 398 մ, հասնում Մարտունի-Գեղիովիտ մարզային նշանակության ճանապարհի եզրին գտնվող թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 522 մ, հասնում թիվ 7 սահմանակետին, թեքվում է հարավ-արևելք, թիվ 8 սահմանակետով անցնում 640 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, թեքվում է դեպի հարավ, թիվ 10-11 սահմանակետերով անցնում 470 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 13 սահմանակետով անցնում 257 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին, առվով շարունակվում դեպի հարավ-արևելք, թիվ 15-26 սահմանակետերով անցնում 2875 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը սարի լանջով թեքվում է

դեպի հարավ-արևմուտք, թիվ 28 սահմանակետով անցնում 728 մ, հասնում թիվ 29 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 141 մ, հասնում թիվ 30 սահմանակետին: Թիվ 30 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 372 մ, հասնում թիվ 31 սահմանակետին, թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 265 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 253 մ, հասնում թիվ 33 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևմուտք, թիվ 34 սահմանակետով անցնում 695 մ, հասնում թիվ 35 սահմանակետին: Թիվ 35 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, դաշտային ճանապարհով, թիվ 36-42 սահմանակետերով անցնում 3527 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 43 սահմանակետին: Թիվ 43 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 44 սահմանակետով անցնում 213 մ, հասնում թիվ 45 սահմանակետին, ապա ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 46-49 սահմանակետերով անցնում 4717 մ, որտեղից թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, թիվ 51-52 սահմանակետերով անցնում 2896 մ, հասնում Գեղիովիտ, Վաղաշեն գյուղական և Մարտունի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 19438 մ է:

### **ԳԵՂԻՈՎԻՏ – ՎԱՂԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Գեղիովիտ, Վաղաշեն գյուղական համայնքների և Մարտունի քաղաքային համայնքի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք անցնում 3343մ հասնում թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք թիվ 2-4 սահմանակետերով անցնում 2262մ հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ անցնում 405մ հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք անցնում 704մ հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը ձորով անցնում է 4178մ հասնում է Գեղիովիտ, Վաղաշեն գյուղական համայնքների և Վայոց Ձոր մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13866 մ է:

## **ԳԵՂՐՈՎԻՏ – ՎԱՅՈՑ ՉՈՐԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Գեղարքունիքի և Վայոց ձորի մարզերի սահմանների հետ:

## **ԳԵՂՐՈՎԻՏ – ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Գեղարքունիքի և Արարատի մարզերի սահմանների հետ:

## **ԳԵՂՐՈՎԻՏ – ՄԱԴԻՆԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Գեղիովիտ, Մադինա և Ներքին Գետաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Արգիճի գետով թեքվում է դեպի հարավ, թիվ 1-44 սահմանակետերով անցնում 5829 մ, հասնում թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետի ոլորաններով, թիվ 46-66 սահմանակետերով անցնում 5203 մ, հասնում թիվ 67 սահմանակետին: Թիվ 67 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 68-69 սահմանակետերով անցնում 1040 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 70 սահմանակետին: Թիվ 70 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 25.0մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 71 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվի ոլորաններով անցնում 6688 մ հասնում թիվ 72 սահմանակետին, կրկին թեքվում է նույն ուղղությամբ, առվի ոլորաններով, թիվ 73-84 սահմանակետերով անցնում 2391 մ, հասնում թիվ 85 սահմանակետին: Թիվ 85 սահմանակետից սահմանագիծը թեք լանջերով, բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 86-100 սահմանակետերով անցնում 3086 մ, հատելով առուներ և դաշտային ճանապարհներ հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 101 սահմանակետին, որտեղից կրկին բարձրունքներով և թեք լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 102-109 սահմանակետերով անցնում 2737 մ, հատելով դաշտային ճանապարհներ, հասնում թիվ 110 սահմանակետին: Թիվ 110 սահմանակետից սահմանագիծը կորագծով, թիվ 111-114

սահմանակետերով անցնում 964 մ, հատելով ձորակը հասնում թիվ 115 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 269 մ, հասնում թիվ 116 սահմանակետին: Թիվ 116 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 117-120 սահմանակետերով անցնում 1911 մ, հատելով դաշտային ճանապարհները հասնում ձորի եզրին գտնվող թիվ 121 սահմանակետին, ապա ձորով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 122-126 սահմանակետերով անցնում 1434 մ, հասնում թիվ 127 սահմանակետին: Թիվ 127 սահմանակետից սահմանագիծը հատելով ձորը, ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 128-131 սահմանակետերով անցնում 2447 մ, հասնում Գեղիովիտ, Մադինա գյուղական համայնքների և Արարատի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 34024 մ է:

### **ԳԵՂԻՈՎԻՏ – ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Գեղիովիտ, Ներքին Գետաշեն գյուղական համայնքների և Մարտունի քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-10 սահմանակետերով անցնում 1624մ, հասնում թիվ11 սահմանակետին, որտեղից լանջերով թեքվում է դեպի հյուսիս արևմուտք, ապա հարավ-արևմուտք,թիվ 12-13 սահմանակետերով անցնում 707մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք անցնում 76մ, հասնում Արգիճի գետի ափին գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը Արգիճի գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 16-40 սահմանակետերից անցնում 4084մ, հասնում Գեղիովիտ, Ներքին Գետաշեն և Մադինա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6488 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Գետիկ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Տավուշ մարզին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Թբուշուր գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Դրախտիկ գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ե» Մարտունի գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Ե»-«Ա» հատվածով՝ Այգուտ գյուղական համայնքին:

### **ԳԵՏԻԿ-ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»- «Բ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանների հետ:

### **ԳԵՏԻԿ –ԹԹՈՒՋՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Գետիկ, Թբուշուր գյուղական համայնքների և Տավուշի մարզի բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով իջնում է դեպի հարավ թիվ 1-18 սահմանակետերով անցնում 2054մ հասնում թիվ 19 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևելք նորից ձորով 20-53 սահմանակետերով անցնում 3122մ հասնում թիվ 54 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ ապա հարավ-արևմուտք ջրբաժանով թիվ 55-62 սահմանակետերով անցնում 2467մ հասնում թիվ 63 սահմանակետին: Թիվ 63 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք անցնում 1221մ հասնում թիվ 64 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևմուտք ձորով անցնում 2358մ հասնում Գետիկ, Թբուշուր և Դրախտիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը՝ 11221մ է:

### **ԳԵՏԻԿ - ԴՐԱՒՏԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Գետիկ, Դրախտիկ և Մարտունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է լեռան գագաթին սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 723 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին, որտեղից թեք լանջով թեքվում է արևելք, անցնում 735 մ, հասնում լեռան գագաթին գտնվող Գետիկ, Դրախտիկ և Թթուջուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1458 մ է:

### **ԳԵՏԻԿ – ՄԱՐՏՈՒՆԻ ՍԱՀՄԱՆԱԿԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Գետիկ, Մարտունի և Այգուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, սարալանջով, թիվ 1 սահմանակետով անցնում 607մ հասնում թիվ 2 սահմանակետին, թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում առուներ, թեք սարալանջով, թիվ 3 սահմանակետով անցնում 915մ հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 197մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ճանապարհով անցնում 229մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում առու, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 804մ, հասնում թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 187մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 170 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 12-13 սահմանակետերով անցնում 736մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 141մ, հասնում է թիվ 15 սահմանակետը, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 45մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 278մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, որը գտնվում է առվի ափին, ապա առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 151մ, հասնում թիվ 18 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է հարավ-արևելք, անցնում 92մ, հասնում թիվ 19 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ անցնում 285 մ հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը սարալանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 298մ,

հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 129մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, թիվ 23-24 սահմանակետերով անցնում 318մ, հասնում է Մարտունու բնակավայրի արևելյան եզրագծի մոտ գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 93մ հասնում միջհամայնքային ճանապարհի և առվի եզրին գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը բնակավայրի եզրագծով և առվի ոլորաներով, թիվ 27-37 սահմանակետերով անցնում 516մ, հասնում թիվ 38 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, այնուհետև հարավ, առվով, թիվ 39-59 սահմանակետերով անցնում 2188մ, հասնում է թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք անցնում 512մ, հասնում թիվ 61 սահմանակետին: Թիվ 61 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 62-64 կետերով անցնում 1762մ, հասնում թիվ 65 սահմանակետին: Թիվ 65 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք անցնում 387մ, հասնում թիվ 66 սահմանակետին: Թիվ 66 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ թիվ 67-71 սահմանակետերով անցնում 1309մ, հասնում թիվ 72 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք հետո հարավ, այնուհետև հարավ-արևմուտք անցնում 779մ, հասնում Գետիկ, Մարտունի և Դրախտիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13128 մ է:

#### **ԳԵՏԻԿ-ԱՅԳՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Գետիկ, Այգուտ գյուղական համայնքների և Տավուշի մարզ տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է դաշտային ճանապարհի եզրին, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, սարի թեք լանջով, թիվ 1-7 սահմանակետերով անցնում 724մ, հասնում թիվ 8 սահմանակետին, ապա կրկին թեքվում է հարավ-արևմուտք թիվ 8-14 սահմանակետ անցնում 837 մ, հասնում թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ- արևմուտք թիվ 16-20 սահմանակետերով անցնում 1727մ հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 22-26 սահմանակետերով անցնում 1046 մ հասնում Գետիկ, Մարտունի և Այգուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4335 մ է:

ՀԱԿԵԼՎԱԾ 15.25  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՐԱՆԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Դարանակ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Արեգունի գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ» հատվածով՝ Սևանա լճին, արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով Փանբակ գյուղական համայնքին:

**ԴԱՐԱՆԱԿ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)  
ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

**ԴԱՐԱՆԱԿ – ԱՐԵԳՈՒՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Դարանակ, Արեգունի գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 1089 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 1239 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը կրկին բարձրունքներով թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 6-7 սահմանակետերով անցնում 1231 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս արևմուտք, թիվ 9 սահմանակետով անցնում 389 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ, թիվ 11 սահմանակետով անցնում 793 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 13 սահմանակետով անցնում 690 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 15-19 սահմանակետերով անցնում 2307 մ, հատելով Երևան-Վարդենիս հանրապետական նշանակության ճանապարհը, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է կրկին հարավ-արևմուտք, անցնում 409 մ, հասնում Դարանակ, Արեգունի գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8147 մ է:

#### **ԴԱՐԱՆԱԿ – ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Սևանա լճի ափին:

#### **ԴԱՐԱՆԱԿ – ՓԱՄԲԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Դարանակ, Փամբակ գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 1 սահմանակետով անցնում 773 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից բարձրունքներով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 3-11 սահմանակետերով անցնում 2241 մ, հասնում թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 234 մ, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 14-15 սահմանակետերով անցնում 1344 մ, հասնում թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 422 մ, հասնում թիվ 17 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 18 սահմանակետով անցնում 766 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 217 մ, հասնում 2455.3 մ միջ ունեցող թիվ 20 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում ձորը, հատում Երևան-Սևան հանրապետական նշանակության ճանապարհը, թիվ 21-25 սահմանակետերով անցնում 2014 մ, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է նույն ուղղությամբ, անցնում 608 մ, հասնում Դարանակ, Փամբակ գյուղական և Սևանա լճի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8619 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.26  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՄԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Դիմաշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածներով սահմանակից է Սենյոնովկա գյուղական համայնքին, արևելքից «Բ»-«Գ» հատվածներով Գեղամավան և «Գ»-«Դ» հատվածներով Ծաղկունք գյուղական համայնքներին, հարավից «Դ»-«Ե» հատվածներով Կոտայքի մարզին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածներով Ջովաբեր գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Զ»-«Ա» հատվածով՝ Տավուշի մարզին:

#### **ԴԴՄԱՇԵՆ-ՍԵՄՅՈՆՈՎԿԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Դդմաշեն, Սենյոնովկա գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 678 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հյուսիս-արևելք անցնում 675 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 2 սահմանակետին, այնուհետև նորից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 3 սահմանակետով, անցնում 1019 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 263 մ հասնում ձորի մեջ գտնվող թիվ 5 սահմանակետին, որից հետո թեքվում է հարավ-արևելք ձորով, թիվ 6 սահմանակետով անցնում 758 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, անցնում 209 մ, հասնում բլրի լանջին գտնվող թիվ 8 սահմանակետին, որից հետո կտրուկ թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 252.0 մ, հասնում երկգագաթ բլրի գագաթների մեջ գտնվող թիվ 9 սահմանակետին, այնուհետև թեքվում դեպի ասրելք, անցնում 237 մ, հասնում Դդմաշեն, Սենյոնովկա և Գեղամավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 4091 մ է:

#### **ԴԴՄԱՇԵՆ-ԳԵՂԱՄԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Դդմաշեն, Սենյոնովկա և Գեղամավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1008 մ, հասնում բլրի գագաթին գտնվող Դդմաշեն, Գեղամավան և Ծաղկունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1008 մ է:

## **ԴԴՄԱՇԵՆ - ԾԱՂԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Դդմաշեն, Գեղամավան և Ծաղկունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թեք լանջով, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 889 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, անցնում 1091 մ, հասնում 2405.0 մ նիշ ունեցող լեռան գագաթին գտնվող եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է թիվ 4 սահմանակետը, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 5-7 սահմանակետերով անցնում 1719 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 1545 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, այստեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 843 մ, հասնում է առվի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին, այնուհետև առվով թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 11-13 սահմանակետերով անցնում 639 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևմուտք, թիվ 15-16 սահմանակետերով անցնում 757 մ, հատելով Ծաղկունք-Դդմաշեն միջհամայնքային ճանապարհը, հասնում է թիվ 17 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ, ապա հարավ-արևմուտք, հատում Զրազդան գետը, դաշտային ճանապարհը, թիվ 18-20 սահմանակետերով անցնում 1865 մ, հասնում թիվ 21 սահմանակետին, այստեղից թեքվում է հարավ, ապա հարավ-արևելք և հարավ-արևմուտք, թիվ 21-26 սահմանակետերով անցնում 1040 մ, հասնում թիվ 27 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 28-31 սահմանակետերով անցնում 1234 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք ապա հարավ-արևելք, թիվ 33-37 սահմանակետերով անցնում 1304 մ, հասնում թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, հատում Երևան-Սևան հանրապետական նշանակության ճանապարհը, թիվ 39 սահմանակետով անցնում 1702 մ, հատում Դդմաշեն, Ծաղկունք գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանգծի ընդհանուր երկարությունը 14624 մ է:

## **ԴԴՄԱՇԵՆ – ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

«Դ»-«Ե» հատվածով սահմանագիծը համընկնում է Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի սահմանների հետ:

## **ԴԴՄԱՇԵՆ – ԶՈՎԱԲԵՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Դոմաշեն, Ջովաբեր գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Ջ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 1730 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, այնուհետև թեքվելով դեպի արևմուտք անցնում 772 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 405 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին: թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, անցնում 111 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, ապա լեռնաշղթայով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 5 սահմանակետով անցնում 488 մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը լեռնաշղթայով, նույն ուղղությամբ, թիվ 7-11 սահմանակետերով անցնելով 2065 մ, հասնում թիվ 12 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, անցնում 64 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 13 սահմանակետին, ապա թեքվելով դեպի հարավ-արևմուտք, անցնում է 447 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 15-39 սահմանակետերով անցնում 6593 մ, հասնում թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 41-45 սահմանակետերով անցնում 1773 մ, հասնում թիվ 46 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 554 մ, հասնում Դոմաշեն, Ջովաբեր գյուղական համայնքների և Կոտայքի մարզի տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ջ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15005 մ է:

### **ԴԴՄԱՇԵՆ-ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Ջ»-«Ա»**

«Ջ»-«Ա» հատվածով սահմանագիծը հանընկնում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանների հետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.27  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԴՐԱԲԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Դպրաբակ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Տավուշի մարզին, արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Այգուտ գյուղական համայնքին, հարավից «Գ»-«Դ»

հատվածով՝ Մարտունի և «Դ»-«Ե» հատվածով՝ Դրախտիկ գյուղական համայնքներին, արևմուտքից «Ե»-«Զ» հատվածով՝ Կալավան և «Զ»-«Ա» հատվածով՝ Զորավանք գյուղական համայնքներին:

#### **ԴՊՐԱԲԱԿ – ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանների հետ:

#### **ԴՊՐԱԲԱԿ - ԱՅԳՈՒՏ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Դպրաբակ, Այգուտ համայնքների և Տավուշի մարզ տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 1-8 սահմանակետերով անցնում 1170 մ հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք թիվ 10 սահմանակետով անցնում 722 մ հասնում առվի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք առվի թիվ 12-43 սահմանակետերով անցնում 6160 մ հասնում թիվ 44 սահմանակետին, թիվ 44 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, ապա հարավ-արևմուտք թիվ 45 սահմանակետով անցնում 1045 մ հասնում թիվ 46 սահմանակետին, թիվ 46 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք թիվ 47-53 սահմանակետերով անցնում 3475 մ հասնում թիվ 54 սահմանակետին, թիվ 54 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք անցնում 816 մ հասնում թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք անցնում 1254 մ հասնում Դպրաբակ, Այգուտ և Մարտունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը՝ 14642 մ է:

#### **ԴՊՐԱԲԱԿ – ՄԱՐՏՈՒՆԻ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Դպրաբակ, Մարտունի և Այգուտ գյուղական համայնքների վարչական սահմանների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 1-13 սահմանակետերով անցնում 1657 մ հասնում թիվ 14 սահմանակետին, թիվ 14 սահմանակետից

սահմանագիծը թեքվում է դեպի հարավ թիվ 15 սահմանակետով անցնում 319 մ, հասնում Դպրաբակ, Մարտունի և Դրախտիկ գյուղական համայնքների վարչական սահմանների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1976 մ է:

#### **ԴՊՐԱԲԱԿ - ԴՐԱԽՏԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Դպրաբակ, Դրախտիկ և Կալվան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 508 մ, հասնում Դպրաբակ, Դրախտիկ և Մարտունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 508 մ է:

#### **ԴՊՐԱԲԱԿ – ԿԱԼՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Դպրաբակ, Կալվան և Ջորավանք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 404 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, թիվ 1 սահմանակետից թեքվում է դեպի հարավ-արևմուտք անցնում 512 մ, միանում Կալվան բնակավայրի արևելյան եզրագծի թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք անցնում 504 մ հասնում թիվ 3 սահմանակետին, թիվ 3 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ անցնում 500 մ հասնում է թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է 60 մ դեպի հյուսիս-արևմուտք հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք անցնում 145 մ հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, սարալանջով անցնում 682 մ հասնում թիվ 7 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, լանջով թիվ 8 սահմանակետով անցնում 626 մ հասնում գետի ափին գտնվող թիվ 9 սահմանակետին, որտեղից գետով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ ու հարավ-արևմուտք, թիվ 10-15 սահմանակետերով անցնում է 673 մ հասնում գետի ափին գտնվող թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք թիվ 17 սահմանակետով անցնում 1231 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք ապա դեպի հարավ, հատում առուն և դաշտային ճանապարհը, թեք լանջով թիվ 19 սահմանակետով անցնում է 668 մ հասնում թիվ 20

սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք թիվ 21-22 սահմանակետերով անցնում 192 մ հասնում թիվ 23 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք անցնում 307 մ հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին, թիվ 24 սահմանակետից սահմանագիծն այդ ճանապարհով թեքվում է դեպի հարավ, թիվ 25-28 սահմանակետերով անցնում 643 մ հասնում թիվ 29 սահմանակետին, ապա ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 30-35 սահմանակետերով անցնում 1450 մ հասնում է արվի եզրին գտնվող թիվ 36 սահմանակետին: Թիվ 36 սահմանակետից սահմանագիծ առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 37 սահմանակետով անցնում 467 մ հասնում Դպրաբակ, Կալվան և Դրախտիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9063 մ է:

#### **ԴՊՐԱԲԱԿ – ՉՈՐԱՎԱՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Ա»**

Դպրաբակ, Չորավանք գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 1 սահմանակետով 2428 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 743 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 4-6 սահմանակետերով անցնում 857 մ, հասնում ճամբարակ-Իջևան հանրապետական նշանակության ճանապարհի հետ հատման կետում գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը անցնում է նույն ուղղությամբ 313 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևելք, թիվ 9,10 սահմանակետերով անցնելով 1904 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 12-14 սահմանակետերով անցնելով 952 մ, հասնում է Դպրաբակ, Չորավանք և Կալվան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7197 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.28  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՐԱԽՏԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Դրախտիկ գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիս-արևելյան մասում:

Համայնքը արևմուտքից և հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կալավան գյուղական համայնքին, հյուսիսից «Բ»-«Գ» հատվածով՝ Դպրաբակ, «Գ»-«Դ» հատվածով՝ Մարտունի, «Դ»-«Ե» հատվածով՝ Գետիկ, «Ե»-«Զ» հատվածով՝ Թթուջուր գյուղական համայնքին, արևմուտքից և հարավից «Զ»-«Է» հատվածով՝ Աղբերք գյուղական համայնքին, հարավից «Է»-«Ա» հատվածով՝ Սևանա լճին:

### **ԴՐԱԽՏԻԿ – ԿԱԼԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Դրախտիկ, Կալավան և Դպրաբակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 1-19 սահմանակետերով անցնում 2767 մ, հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 21-23 սահմանակետերով անցնում 5561 մ, հասնում Դրախտիկ, Կալավան գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8328 մ է:

### **ԴՐԱԽՏԻԿ – ԴՊՐԱԲԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Դրախտիկ, Դպրաբակ և Կալավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 508 մ, հասնում Դրախտիկ, Դպրաբակ և Մարտունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 508 մ է:

### **ԴՐԱԽՏԻԿ – ՄԱՐՏՈՒՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Դրախտիկ, Դպրաբակ և Մարտունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից թեքվում է դեպի արևելք, անցնում 745 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից բարձրունքներով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 2-3 սահմանակետերով անցնում 1475 մ, հատելով առունները հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 6-8 սահմանակետերով անցնում 2388 մ, հատելով առունները, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 459 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեք լանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա արևելք, թիվ 11-12 սահմանակետերով անցնում 1261 մ, հատելով ձորը հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը հատելով դաշտային ճանապարհը թեքվում է դեպի հյուսիս, բլրակներով, թեք լանջով, թիվ 14,15

սահմանակետերով անցնում 356 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին, որտեղից բարձրունքներով ( ջրբաժանով ) թեքվում է դեպի արևելք, թիվ 17-27 սահմանակետերով անցնում 2672 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 28 սահմանակետին, ապա ջրբաժանով թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 458 մ, հասնում Դրախտիկ, Գետիկ և Մարտունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9814 մ է:

#### **ԴՐԱԽՏԻԿ - ԳԵՏԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Դրախտիկ, Գետիկ և Մարտունի գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, որը գտնվում է լեռան գագաթին սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի արևելք, ապա հարավ-արևելք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 723 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 5 սահմանակետին, որտեղից թեք լանջով թեքվում է արևելք, անցնում 735 մ, հասնում լեռան գագաթին գտնվող Դրախտիկ, Գետիկ և Թթուջուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1458 մ է:

#### **ԴՐԱԽՏԻԿ - ԹԹՈՒՋՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Համայնքը հյուսիս-արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սևանա լճին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Ծակքար գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Արարատի մարզին, հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Վարդաձոր գյուղական համայնքին:

### **ԶՈՐԱԳՅՈՒՂ – ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագծի հանընկնում է Սևանա լճի ափին:

### **ԶՈՐԱԳՅՈՒՂ – ԾԱԿՔԱՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Զորագյուղ, Ծակքար գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 1414 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից առվով նույն ուղղությամբ, թիվ 2-3 սահմանակետերով անցնում է 1128 մ, հատելով Մարտունի-Սևան հանրապետական նշանակության ճանապարհը, հասնում է թիվ 4 սահմանակետին, թեքվում արևմուտք, անցնում 207 մ, հասնում թիվ 5 սահմանակետին, թեքվում է հարավ, թիվ 6 սահմանակետով անցնում 487 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 8-20 սահմանակետերով անցնում 1963 մ,

հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին դեպի հարավ-արևմուտք, թիվ 22-31 սահմանակետերով անցնում 2732 մ, հասնում թիվ 32 սահմանակետին: Թիվ 32 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 33-39 սահմանակետերով անցնում 2221 մ, հասնում թիվ 40 սահմանակետին, որտեղից թեքվում է արևմուտք, անցնում 247 մ, հասնում թիվ 41 սահմանակետին, ապա թեքվում է հարավ, անցնում 260 մ, հասնում թիվ 42 սահմանակետին: Թիվ 42 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 250 մ, հասնում թիվ 43 սահմանակետին, թեքվում հյուսիս-արևմուտք, անցնում 231 մ, հասնում թիվ 44 սահմանակետին, կորագծով թեքվում հարավ-արևմուտք, թիվ 45-47 սահմանակետերով անցնում 698 մ, հասնում թիվ 48 սահմանակետին: Թիվ 48 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 49-70 սահմանակետերով անցնում 3181 մ, հասնում թիվ 71 սահմանակետին: Թիվ 71 սահմանակետից սահմանագիծը կորագծով թեքվում է դեպի արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 72-74 սահմանակետերով անցնում 1111 մ, հասնում թիվ 75 սահմանակետին, որտեղից լանջերով թեքվում է դեպի արևմուտք, թիվ 76-77 սահմանակետերով անցնում 2269 մ, հասնում թիվ 78 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք և հարավ, թիվ 79-82 սահմանակետերով անցնում 1599 մ, հանում ձորի եզրին գտնվող թիվ 83 սահմանակետին: Թիվ 83 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, անցնում 5011 մ, հասնում թիվ 84 սահմանակետին: Թիվ 84 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա արևմուտք, թիվ 85-86 սահմանակետերով անցնում 823 մ, հասնում Ձորագյուղ, Ծակքար գյուղական համայնքների և Արարատի մարզի տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 25832 մ է:

#### **ՁՈՐԱԳՅՈՒՂ – ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը հանընկնում է Գեղարքունիքի և Արարատի մարզերի սահմանների հետ:

#### **ՁՈՐԱԳՅՈՒՂ – ՎԱՐՂԱՁՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Ձորագյուղ, Վարդաձոր գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է

դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-17 սահմանակետերով անցնում 1955 մ, հասնում թիվ 18 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևելք, անցնում 108 մ, հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 139 մ, հասնում է Մարտունի-Սևան հանրապետական նշանակության ճանապարհի եզրին գտնվող թիվ 20 սահմանակետին, այնուհետև շարունակվում է առվով դեպի հարավ-արևմուտք, անցնում 431 մ, հասնում է թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, անցնում 290 մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, ապա թեքվելով հարավ-արևելք, անցնում 150 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 23 սահմանակետին, այնուհետև առվով շարունակվում է դեպի հարավ, թիվ 24 սահմանակետով անցնում 703 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 26-38 սահմանակետերով անցնում 1576 մ, հասնում թիվ 39 սահմանակետին: Թիվ 39 սահմանակետից սահմանագիծը, առվով թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 40-48 սահմանակետերով անցնում 2303 մ, հասնում թիվ 49 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 304 մ, հասնում թիվ 50 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 277 մ, հասնում թիվ 51 սահմանակետին: Թիվ 51 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 310 մ, հասնում թիվ 52 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 155 մ, հասնում թիվ 53 սահմանակետին, այնուհետև թեքվում է արևելք, անցնում 811 մ, հասնում թիվ 54 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս, անցնում 74 մ, հասնում թիվ 55 սահմանակետին: Թիվ 55 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 181 մ, հասնում թիվ 56 սահմանակետին, ապա թեքվում հարավ, անցնում 241 մ, հասնում թիվ 57 սահմանակետին, թեքվում արևելք, անցնում 137 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 58 սահմանակետին: Թիվ 58 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 59 սահմանակետով անցնում 725 մ, հասնում թիվ 60 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնում 548 մ, հասնում թիվ 61 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 62 սահմանակետով անցնում 498 մ, հասնում թիվ 63 սահմանակետին, ապա թեքվում է հյուսիս-արևմուտք, հարավ-արևմուտք և հարավ թիվ 64-65 սահմանակետերով անցնում 267 մ, հասնում է առվի եզրին գտնվող թիվ 66 սահմանակետին, այնուհետև առվով շարունակվում է դեպի արևմուտք, թիվ 67-68 սահմանակետերով անցնում 587 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 70 սահմանակետին, այնուհետև թեքվում է հյուսիս-արևմուտք, թիվ 71 սահմանակետով անցնում 1143 մ. հասնում է թիվ 72

սահմանակետին: Թիվ 72 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 73 սահմանակետով անցնում 1495 մ, հասնում թիվ 74 սահմանակետին: Թիվ 74 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք և կրկին հյուսիս-արևմուտք, թիվ 75-80 սահմանակետերով անցնում 5483 մ, հատելով ձորեր, ձորակներ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 81 սահմանակետին, որտեղից թեք լանջերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 82-85 սահմանակետերով անցնում 1697 մ, հասնում Ձորագյուղ, Վարդաձոր գյուղական համայնքների և Արարատի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 22588 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԶՈՐԱՎԱՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Զորավանք գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսային մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Դպրաբակ գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Կալավան գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Անտառամեջ գյուղական համայնքին, հյուսիս-արևմուտքից «Դ»-«Ա» հատվածով՝ Տավուշի մարզին:

### **ԶՈՐԱՎԱՆՔ - ԴՊՐԱԲԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Զորավանք, Դպրաբակ գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով թիվ 1 սահմանակետով 2428 մ, հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնելով 743 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 4-6 սահմանակետերով անցնում 857 մ, հասնում ճամբարակ-Իջևան հանրապետական նշանակության ճանապարհի հետ հատման կետում գտնվող թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը անցնում է նույն ուղղությամբ 313 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվելով հարավ-արևելք, թիվ 9,10 սահմանակետերով անցնելով 1904 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, թիվ 12-14 սահմանակետերով անցնելով 952 մ, հասնում է Զորավանք, Դպրաբակ և Կալավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7197 մ է:

### **ԶՈՐԱՎԱՆՔ – ԿԱԼԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Կալավան, Չորավանք և Դպրաբակ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 1360 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, թեքվում է դեպի հարավ, թիվ 3- 4 սահմանակետերով անցնելով 1477 մ, հասնում է «Զիլավերին» կոչվող եռանկյունաչափական թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը իջնում է հարավ, անցնելով 501 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնելով 1095 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևմուտք, անցնելով 475 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, անցնում է 602 մ, հասնում է Չորավանք, Կալավան և Անտառամեջ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5510 մ է:

#### **ՉՈՐԱՎԱՆՔ – ԱՆՏԱՌԱՄԵՋ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Չորավանք, Անտառամեջ գյուղական համայնքների և Տավուշի մարզի տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 1689 մ, հասնում է թիվ 4 սահմանակետին, որից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, անտառի եզրով, թիվ 5-11 սահմանակետերով անցնելով 1477 մ, հասնում է գետի ափին գտնվող թիվ 12 սահմանակետին: Թիվ 12 սահմանակետից սահմանագիծը գետով թեքվում է հարավ, թիվ 13-23 սահմանակետերով անցնում 2048 մ, հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը 25-27 սահմանակետերով շարունակվում է դեպի հարավ, անցնելով 1196 մ, հասնում Չորավանք, Անտառամեջ և Կալավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6410 մ է:

#### **ՉՈՐԱՎԱՆՔ – ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

«Դ»-«Ա» հատվածով սահմանագիծը հանընկնում է Գեղարքունիքի և Տավուշի մարզերի սահմանների հետ:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱԴԻՆԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մադինա գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևմտյան մասում

Համայնքը արևելքից և հարավից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գեղիովիտ գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով՝ Արարատի մարզին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Վերին Գետաշեն գյուղական համայնքին, հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Ներքին Գետաշեն գյուղական համայնքին:

### **ՄԱԴԻՆԱ - ԳԵՂՅՈՎԻՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Մադինա, Գեղիովիտ և Ներքին Գետաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Արգիճի գետով թեքվում է դեպի հարավ, թիվ 1-44 սահմանակետերով անցնում 5829 մ, հասնում թիվ 45 սահմանակետին: Թիվ 45 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, գետի ոլորաններով, թիվ 46-66 սահմանակետերով անցնում 5203 մ, հասնում թիվ 67 սահմանակետին: Թիվ 67 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 68-69 սահմանակետերով անցնում 1040 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 70 սահմանակետին: Թիվ 70 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ, անցնում 25.0մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 71 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվի ոլորաններով անցնում 6688 մ հասնում թիվ 72 սահմանակետին, կրկին թեքվում է նույն ուղղությամբ, առվի ոլորաններով, թիվ 73-84 սահմանակետերով անցնում 2391 մ, հասնում թիվ 85 սահմանակետին: Թիվ 85 սահմանակետից սահմանագիծը թեք լանջերով, բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 86-100 սահմանակետերով անցնում 3086 մ, հատելով առուներ և դաշտային ճանապարհներ հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 101 սահմանակետին, որտեղից կրկին բարձրունքներով և թեք լանջերով թեքվում է դեպի

հարավ-արևելք, ապա հարավ-արևմուտք, թիվ 102-109 սահմանակետերով անցնում 2737 մ, հատելով դաշտային ճանապարհներ, հասնում թիվ 110 սահմանակետին: Թիվ 110 սահմանակետից սահմանագիծը կորագծով, թիվ 111-114 սահմանակետերով անցնում 964 մ, հատելով ձորակը հասնում թիվ 115 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 269 մ, հասնում թիվ 116 սահմանակետին: Թիվ 116 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 117-120 սահմանակետերով անցնում 1911 մ, հատելով դաշտային ճանապարհները հասնում ձորի եզրին գտնվող թիվ 121 սահմանակետին, ապա ձորով թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, ապա հարավ-արևմուտք, թիվ 122-126 սահմանակետերով անցնում 1434 մ, հասնում թիվ 127 սահմանակետին: Թիվ 127 սահմանակետից սահմանագիծը հատելով ձորը, ջրբաժանով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 128-131 սահմանակետերով անցնում 2447 մ, հասնում Մադինա, Գեղհովիտ գյուղական համայնքների և Արարատի մարզի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 34024 մ է:

#### **ՄԱԴԻՆԱ - ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը համընկնում է Գեղարքունիքի և Արարատի մարզերի սահմանների հետ:

#### **ՄԱԴԻՆԱ - ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Մադինա, Ներքին Գետաշեն և Վերին Գետաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 908 մ, հասնում 2829.1 մ նիշ ունեցող Աղմաղան լեռան գագաթին գտնվող եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է թիվ 2 սահմանակետը: Թիվ 2 սահմանակետից սահմանագիծը լանջերով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 3-7 սահմանակետերով անցնում 3226 մ, հասնում թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով, ձորակով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 9-45 սահմանակետերով անցնում 5429 մ, հասնում թիվ 46 սահմանակետին: Թիվ 46 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, առվի ոլորաններով անցնում 6294 մ, հասնում թիվ 47 սահմանակետին: Թիվ 47 սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 48-61 սահմանակետերով անցնում 5224 մ, հատելով դաշտային

ճանապարհները, հասնում Մադինա, Վերին Գետաշեն գյուղական համայնքների և Արարատի մարզի տարօքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 21082 մ է:

### **ՄԱԴԻՆԱ - ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Մադինա, Գեղիովիտ և Ներքին Գետաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, անցնում 360 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 2 սահմանակետով անցնում 328, հատելով Մադինա-Վերին Գետաշեն միջհամայնքային ճանապարհը, հասնում է թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը շարունակվում է նույն ուղղությամբ թիվ 6-10 սահմանակետերով անցնում 1492մ հատելով Աղյաման ջրանցքը, հասնում է դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ, թիվ 12 սահմանակետով անցնում 806 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է արևմուտք, թիվ 14-18 սահմանակետերով անցնում 1371 մ, հասնում թիվ 19 սահմանակետին, ապա թեքվում հյուսիս-արևմուտք, անցնում 849 մ, հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 202 մ, հասնում Մադինա, Վերին Գետաշեն և Ներքին Գետաշեն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5408 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մարտունի գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևելյան մասում:

Համայնքը հյուսիսիցև արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Գետիկ գյուղական համայնքին, հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Դրախտիկ գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Դ» հատվածով՝ Դպրաբակ գյուղական համայնքին, արևմուտքից և հյուսիսից «Դ»-«Ա» հատվածով՝ Այգուտ գյուղական համայնքին:

### **ՄԱՐՏՈՒՆԻ - ԳԵՏԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Մարտունի, Գետիկ և Այգուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, սարալանջով, թիվ 1 սահմանակետով անցնում 607մ հասնում թիվ 2 սահմանակետին, թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, հատում առուներ, թեք սարալանջով, թիվ 3 սահմանակետով անցնում 915մ հասնում թիվ 4 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 197մ, հասնում է թիվ 5 սահմանակետին, թեքվում է դեպի հյուսիս-արևելք, ճանապարհով անցնում 229մ, հասնում թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, հատում առու, թիվ 7-8 սահմանակետերով անցնում 804մ, հասնում թիվ 9 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 187մ, հասնում է թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում հյուսիս-արևելք, անցնում 170 մ, հասնում է թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, ապա հարավ-արևելք, թիվ 12-13 սահմանակետերով անցնում 736մ, հասնում է թիվ 14 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 141մ, հասնում է թիվ 15 սահմանակետը, ապա թեքվում է դեպի հարավ, անցնում 45մ, հասնում է թիվ 16 սահմանակետին: Թիվ 16 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 278մ, հասնում է թիվ 17 սահմանակետին, որը գտնվում է առվի

ափին, ապա առվով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 151մ, հասնում թիվ 18 սահմանակետին, որտեղից կրկին թեքվում է հարավ-արևելք, անցնում 92մ, հասնում թիվ 19 սահմանակետին, այնուհետև շարունակվում է նույն ուղղությամբ անցնում 285 մ հասնում է թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը սարալանջով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 298մ, հասնում թիվ 21 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, անցնում 129մ, հասնում է թիվ 22 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ, թիվ 23-24 սահմանակետերով անցնում 318մ, հասնում է Մարտունու բնակավայրի արևելյան եզրագծի մոտ գտնվող թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 93մ հասնում միջհամայնքային ճանապարհի և առվի եզրին գտնվող թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը բնակավայրի եզրագծով և առվի ոլորաներով, թիվ 27-37 սահմանակետերով անցնում 516մ, հասնում թիվ 38 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, այնուհետև հարավ, առվով, թիվ 39-59 սահմանակետերով անցնում 2188մ, հասնում է թիվ 60 սահմանակետին: Թիվ 60 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք անցնում 512մ, հասնում թիվ 61 սահմանակետին: Թիվ 61 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 62-64 կետերով անցնում 1762մ, հասնում թիվ 65 սահմանակետին: Թիվ 65 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք անցնում 387մ, հասնում թիվ 66 սահմանակետին: Թիվ 66 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ թիվ 67-71 սահմանակետերով անցնում 1309մ, հասնում թիվ 72 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք հետո հարավ, այնուհետև հարավ-արևմուտք անցնում 779մ, հասնում Մարտունի, Գետիկ և Դրախտիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13128 մ է:

### **ՍԱՐՏՈՒՆԻ - ԴՐԱԽՏԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Մարտունի, Դպրաբակ և Դրախտիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից թեքվում է դեպի արևելք, անցնում 745 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից բարձրունքներվ թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 2-3 սահմանակետերով անցնում 1475 մ, հատելով առուները հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 6-8 սահմանակետերով

անցնում 2388 մ, հատելով առուները, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 459 մ, հասնում թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեք լանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա արևելք, թիվ 11-12 սահմանակետերով անցնում 1261 մ, հատելով ձորը հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը հատելով դաշտային ճանապարհը թեքվում է դեպի հյուսիս, բլրակներով, թեք լանջով, թիվ 14,15 սահմանակետերով անցնում 356 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 16 սահմանակետին, որտեղից բարձրունքներով ( ջրբաժանով ) թեքվում է դեպի արևելք, թիվ 17-27 սահմանակետերով անցնում 2672 մ, հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 28 սահմանակետին, ապա ջրբաժանով թեքվում է հյուսիս-արևելք, անցնում 458 մ, հասնում Մարտունի, Գետիկ և Դրախտիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 9814 մ է:

#### **ՍԱՐՏՈՒՆԻ - ԴՊՐԱԲԱԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Մարտունի, Դպրաբակ և Այգուտ գյուղական համայնքների վարչական սահմանների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից, սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 1-13 սահմանակետերով անցնում 1657 մ հասնում թիվ 14 սահմանակետին, թիվ 14 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ թիվ 15 սահմանակետով անցնում 319 մ, հասնում Մարտունի, Դպրաբակ և Դրախտիկ գյուղական համայնքների վարչական սահմանների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1976 մ է:

#### **ՍԱՐՏՈՒՆԻ - ԱՅԳՈՒՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ա»**

Մարտունի, Այգուտ և Գետիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք անցնում 159մ հասնում լեռան գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին: Թիվ 1 սահմանակետից սահմանագիծը թեք լանջով թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 811մ հասնում է թիվ 2 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 659մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, որտեղ միանում է առվին և առվով թեքվելով դեպի հարավ-արևմուտք, թիվ 4-5 սահմանակետերով անցնում 405մ հասնում է թիվ 6 սահմանակետին: Թիվ 6 սահմանակետից սահմանագիծը թեքվում է

դեպի հյուսիս-արևմուտք անցնում 334մ հասնում թիվ 7 սահմանակետին, թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 8-10 սահմանակետերով անցնում 562 հասնում է թիվ 10 սահմանակետին, այնուհետև թեքվում հարավ-արևմուտք թիվ 11-14 սահմանակետերով անցնում 732մ հասնում է թիվ 15 սահմանակետին, թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ այնուհետև հարավ-արևմուտք թիվ 16-23 սահմանակետերով անցնում 715մ հասնում թիվ 24 սահմանակետին: Թիվ 24 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք անցնում 996մ հասնում թիվ 25 սահմանակետին: Թիվ 25 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ թիվ 26-27 սահմանակետերով անցնում է 1006մ հասնում թիվ 28 սահմանակետին: Թիվ 28 սահմանակետից սահմանագիծը թեքվում է արևելք ապա հարավ-արևելք, թիվ 29-32 սահմանակետերով, անցնում է 575մ հասնում է թիվ 33 սահմանակետին: Թիվ 33 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք անցնում է 2678մ հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, այնուհետև հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք թիվ 35-37 սահմանակետերով անցնում 2743 մ, հասնում է թիվ 38 սահմանակետին: Թիվ 38 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք անցում 1497մ հասնում Մարտունի, Դպրաբակ և Այգուտ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 13872 մ է:

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՔԵՆԻՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մաքենիս գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավային մասում:

Համայնքը արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Լուսակունք և «Բ»-«Գ» հատվածով՝ Ախարածոր գյուղական համայնքներին, հարավից՝ «Գ»-«Դ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով՝ Կարճաղբյուր գյուղական համայնքին, հյուսիսից «Ե»-«Ա» հատվածով՝ Լճավան գյուղական համայնքին:

### **ՄԱՔԵՆԻՍ – ԼՈՒՍԱԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»**

Մաքենիս, Լուսակունք և Լճավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 1 սահմանակետով անցնում 421 մ, հատելով դաշտային ճանապարհը, հասնում Մաքենիս, Լուսակունք և Ախարածոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 421 մ է:

### **ՄԱՔԵՆԻՍ – ԱԽՊՐԱԶՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»**

Մաքենիս, Ախարածոր և Լուսակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 2700 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 10 սահմանակետով անցնում 432 մ, հատելով Մաքենիս-Ախարածոր միջհամայնքային ճանապարհը, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 12 սահմանակետով անցնում 378 մ, հասնում թիվ 13 սահմանակետին, ապա դաշտային ճանապարհով թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 14-18 սահմանակետերով անցնում 1620 մ,

հասնում թիվ 19 սահմանակետին: Թիվ 19 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, թիվ 20 սահմանակետով անցնում 528 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 21 սահմանակետին, թեքվում է հարավ-արևմուտք, առվով անցնում 467 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, թեքվում է հարավ-արևելք, անցնում 285 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևելք, թիվ 24 սահմանակետով անցնում 1006 մ, հասնում թիվ 25 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 26 սահմանակետով անցնում 477 մ, հասնում թիվ 27 սահմանակետին: Թիվ 27 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 28 սահմանակետով անցնում 1312 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 29 սահմանակետին, որտեղից առվով թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 30-31 սահմանակետերով անցնում 1112 մ, հասնում թիվ 32 սահմանակետին, այնուհետև սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 33 սահմանակետով անցնում 676 մ, հատելով առուն և դաշտային ճանապարհը, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 35-63 սահմանակետերով անցնում 2650 մ, հասնում թիվ 64 սահմանակետին, որտեղից սահմանագիծը ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ, թիվ 65-79 սահմանակետերով անցնում 1984 մ, հասնում թիվ 80 սահմանակետին: Թիվ 80 սահմանակետից սահմանագիծը նույն ձորով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հարավ և հարավ-արևելք, թիվ 81-98 սահմանակետերով անցնում 2834 մ, հասնում Մաքենիս, Ախարածոր գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 18463 մ է:

#### **ՍԱՔԵՆԻՍ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

##### **ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»**

«Գ»-«Դ» հատվածով սահմանագիծը համընկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

##### **ՍԱՔԵՆԻՍ – ԿԱՐՃԱՂԵՅՈՒՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»**

Մաքենիս, Կարճաղբյուր և Լճավան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի

հարավ-արևմուտք, անցնում 354 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա հարավ, թիվ 2 սահմանակետով անցնում 500 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին: Թիվ 3 սահմանակետից սահմանագիծը առվով թեքվում է դեպի հարավ, անցնում 496 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 5-8 սահմանակետերով անցնում 1359 մ, հասնում թիվ 9 սահմանակետին: Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 297 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 11-15 սահմանակետերով անցնում 2452 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 492 մ, հասնում թիվ 17 սահմանակետին: Թիվ 17 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, թիվ 18-20 սահմանակետերով անցնում 873 մ, հասնում դաշտային ճանապարհի մոտ գտնվող թիվ 21 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 22 սահմանակետով անցնում 995 մ, հասնում թիվ 23 սահմանակետին: Թիվ 23 սահմանակետից սահմանագիծը բարձունքներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք ապա հարավ-արևելք թիվ 24-85 սահմանակետերով անցնում 5381 մ, հասնում թիվ 86 սահմանակետին, որտեղից բարձունքներով, թեք լանջերով թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 87-90 սահմանակետերով անցնում 2401 մ, հասնում Մաքենիս, Կարճաղբյուր գյուղական համայնքների և պետական սահմանի (Աղրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 15600 մ է:

### **ՍԱՔԵՆԻՍ – ԼՃԱՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾՆԸ` «Ե» - «Ա»**

Մաքենիս, Լճավան և Լուսակունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 616 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 7-9 սահմանակետերով անցնում 282 մ, հասնում թիվ 10 սահմանակետին: Թիվ 10 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք, թիվ 11-14 սահմանակետերով անցնում 1175 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 15 սահմանակետին: Թիվ 15 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, թիվ 16-23 սահմանակետերով անցնում 2026 մ, հասնում առվի եզրին գտնվող թիվ 24 սահմանակետին: Թիվ 24

սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք և հարավ, առվով, թիվ 25-43 սահմանակետերով անցնում 2633 մ, հասնում Մաքենիս, Լճավան և Կարճաղբյուր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6732 մ է:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Մեծ Մասրիկ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավ-արևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Կախակն գյուղական համայնքին, հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Կուտական գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Տրետուք և «Դ»-«Ե» հատվածով՝ Սոթք գյուղական համայնքներին, հարավ-արևելքից, «Ե»-«Զ» հատվածով՝ Շատվան գյուղական համայնքին, հարավից և հարավ-արևելքից «Զ»-«Է» հատվածով՝ Վարդենիս քաղաքային համայնքին, հյուսիս-արևմուտքից «Է»-«Ա» հատվածով՝ Փոքր Մասրիկ գյուղական համայնքին:

**ՄԵԾ ՄԱՍՐԻԿ – ԿԱԽԱԿՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Մեծ Մասրիկ, Կախակն և Փոքր Մասրիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1153 մ, հասնում Կախակն-Մեծ Մասրիկ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող թիվ 3 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 4-6 սահմանակետերով անցնում 1460 մ, հասնում Մեծ Մասրիկ, Կախակն և Կուտական գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2613 մ է:

**ՄԵԾ ՄԱՍՐԻԿ – ԿՈՒՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Մեծ Մասրիկ, Կուտական և Կախակն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-2 սահմանակետերով անցնում 1411 մ, հասնում Կուտական – Մեծ Մասրիկ միջհամայնքային ճանապարհի եզրին գտնվող «Այգեղուշ» եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է թիվ 3 սահմանակետը, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 4-6 սահմանակետերով անցնում 926 մ, հասնում թիվ 7 սահմանակետին: Թիվ 7 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք,

անցնում 25 մ, հասնում թիվ 8 սահմանակետին, որտեղից թեքվում է հարավ, անցնում 489 մ, հասնում Մեծ Մասրիկ, Կուտական և Տրետուք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2852 մ է:

#### **ՄԵԾ ՄԱՍՐԻԿ - ՏՐԵՏՈՒՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Դ»**

Մեծ Մասրիկ, Կուտական և Տրետուք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ, 1-3 սահմանակետերով անցնում 1313 մ, հատելով Տրետուք-Մեծ Մասրիկ միջհամայնքային ճանապարհը, հասնում Մեծ Մասրիկ, Սոթք և Տրետուք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1313 մ է:

#### **ՄԵԾ ՄԱՍՐԻԿ -ՍՈԹՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Մեծ Մասրիկ, Սոթք և Տրետուք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը վարելահողերի եզրագծով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1-5 սահմանակետերով անցնում 1782 մ, հատելով Մեծ Մասրիկ-Սոթք միջհամայնքային ճանապարհը, հասնում Մասրիկ գետի ափին գտնվող Մեծ Մասրիկ, Սոթք և Շատվան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1782 մ է:

#### **ՄԵԾ ՄԱՍՐԻԿ –ՇԱՏՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

Մեծ Մասրիկ, Սոթք և Շատվան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, գետով թիվ 1-4 սահմանակետերով անցնում 459 մ հասնում է Մասրիկ գետի և ջրանցքի հատման տեղում գտնվող թիվ 5 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ-արևելք անցնում 526 մ, հասնում է թիվ 6 սահմանակետին, այնուհետև թեքվում հարավ-արևմուտք, առվով անցնում է 532 մ, հասնում է Մեծ Մասրիկ, Շատվան գյուղական և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Զ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1517 մ է:

### **ՄԵԾ ՄԱՍՐԻԿ –ՎԱՐՂԵՆԻՍ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Զ»-«Է»**

Մեծ Մասրիկ, Փոքր Մասրիկ գյուղական և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 539 մ, հասնում է թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1221 մ, հասնում Գիլլի ջրանցքի եզրին գտնվող թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը ջրանցքով թեքվում է հարավ-արևելք ջրի հոսանքին հակառակ ուղղությամբ, թիվ 6-9 սահմանակետերով անցնում 2006 մ , հասնում է Մասրիկ գետի հատման տեղում գտնվող թիվ 10 սահմանակետին, այնուհետև Մասրիկ գետով թիվ 11 սահմանակետով, առվով բարձրանում է 4086 մ հասնում առվի և Վարդենիս-Մեծ Մասրիկ միջհամայնքային ճանապարհի հատման տեղում գտնվող թիվ 12 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 13-15 սահմանակետերով անցնում 2919 մ, հատելով Մեծ Մասրիկ ջրանցքը, հասնում Մեծ Մասրիկ, Շատվան գյուղական և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Զ» հանգուցային սահմանակետին:

«Զ»-«Է» սահմանագծի ընդհանուր երկարությունը 10772 մ է:

### **ՄԵԾ ՄԱՍՐԻԿ – ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿ ՍԱՅՄԱՆԱԳԻԾԸ՝ «Է»-«Ա»**

Մեծ Մասրիկ, Փոքր Մասրիկ և Կախակն գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք անցնում է 388մ հասնում թիվ 1 սահմանակետին,այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 2-5 սահմանակետերով անցնում 2047մ հասնում թիվ 6 սահմանակետին, որից հետո կտրուկ թեքվում է դեպի հյուսիս-արևմուտք թիվ 7-8 կետերով անցնում 1114մ հասնում թիվ 9 սահմանակետին, այդտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 10 սահմանակետով անցնելով 464մ, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք թիվ 12-15 սահմանակետերով անցում 1339մ հասնում թիվ 16 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք անցնում 240մ հասնում թիվ 17 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի արևմուտք 18-25 սահմանակետերով անցնում 2584մ հասնում

թիվ 26 սահմանակետին այդտեղից թեքվում է դեպի հյասիս-արևմուտք անցնում 174մ հասնում Մեծ Մասրիկ, Փոքր Մասրիկ գյուղական և քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Է» հանգուցային սահմանակետին:

«Է»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8350 մ է:

ՀԱԿԵԼՎԱԾ 15.63  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԲԱԿ  
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նորաբակ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ազատ գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ պետական սահմանին (Ադրբեջանի Հանրապետություն), հարավից «Գ»-«Դ» հատվածով Ներքին Շորժա գյուղական համայնքին, արևմուտքից «Դ»-«Ե» հատվածով Ջաղացաձոր գյուղական համայնքին, «Ե»-«Ա» հատվածով Շատվան գյուղական համայնքին:

### **ՆՈՐԱԲԱԿ - ԱԶԱՏ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա» - «Բ»**

Նորաբակ, Ազատ և Շատվան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը առկա է թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-28 սահմանակետերով անցնում 4357 մ, հասնում ձորի եզրին գտնվող թիվ 29 սահմանակետին, այնուհետև ձորով թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 30 սահմանակետով անցնում 7786 մ, հասնում Նորաբակ, Ազատ գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 12143 մ է:

### **ՆՈՐԱԲԱԿ – ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆ (ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ) ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ» - «Գ»**

«Բ»-«Գ» հատվածով սահմանագիծը հանդնկնում է Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի հետ:

### **ՆՈՐԱԲԱԿ – ՆԵՐՔԻՆ ՇՈՐժԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ» - «Դ»**

Նորաբակ, Ներքին Շորժա և Ջաղացաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 1-8 սահմանակետերով անցնում 3060 մ, հասնում թիվ 9 սահմանակետին, որտեղից թեքվում է նույն ուղղությամբ, թիվ 10-13 սահմանակետերով անցնում 1812 մ, հասնում թիվ 14 սահմանակետին: Թիվ 14 սահմանակետից սահմանագիծը բարձրունքներով թեքվում է դեպի արևելք, ապա

հարավ-արևելք, թիվ 15-27 սահմանակետերով անցնում 2859 մ, հասնում Նորաբակ, Ներքին Շորժա գյուղական համայնքների և պետական սահմանի (Ադրբեջանի Հանրապետություն) տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 7731 մ է:

### **ՆՈՐԱԲԱԿ – ՋԱՂԱԳԱԾՈՐ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ» - «Ե»**

Նորաբակ, Ջաղագածոր և Շատվան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնում 407 մ, հասնում բլրի գագաթին գտնվող թիվ 1 սահմանակետին, ապա թեքվում դեպի հարավ, անցնում 208 մ, հասնում 2180.8 մ նիշ ունեցող եռանկյունաչափական կետին, որը հանդիսանում է թիվ 2 սահմանակետը, որտեղից թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 3 սահմանակետով անցնում 589 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, անցնում 287 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, հատում Ջաղագածոր-Նորաբակ միջհամայնքային ճանապարհը, թիվ 6-9 սահմանակետերով անցնում 1235 մ, հասնում ջրբաժանի եզրին գտնվող թիվ 10 սահմանակետին, թեքվում հարավ-արևմուտք, թիվ 11-12 սահմանակետերով անցնելով 798 մ, հասնում Նորաբակ, Ներքին Շորժա և Ջաղագածոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3524 մ է:

### **ՆՈՐԱԲԱԿ – ՇԱՏՎԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե» - «Ա»**

Նորաբակ, Շատվան և Ազատ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը Ազատ-Շատվան միջհամայնքային ճանապարհով թեքվում է դեպի արևմուտք, անցնում 307 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք, հատում առուն, թիվ 2-4 սահմանակետերով անցնում 663 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևմուտք, անցնում 53 մ, հասնում թիվ 6 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 7 սահմանակետով անցնում 628 մ, հասնում թիվ 8

սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևմուտք, թիվ 9-10 սահմանակետերով անցնում 1290 մ, հատելով Նորաբակ – Շատվան միջհամայնքային ճանապարհը, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևմուտք, անցնում 241 մ, հասնում Նորաբակ, Շատվան և Ջաղացաձոր գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Ե»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3182 մ է:

ՀԱԿԵԼՎԱԾ 15.63  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆՎԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նորաշեն գյուղական համայնքը գտնվում է մարզի հյուսիսարևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սևանա լճին, արևելքից և հարավից «Բ»-«Գ» հատվածով՝ Ծովազարդ գյուղական համայնքին, արևմուտքից «Գ»-«Ա» հատվածով՝ Չկալովկա գյուղական համայնքին:

## **ՆՈՐԱՇԵՆ – ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատված-ով սահմանագիծը համընկնում է Սևանա լճի ափին

## **ՆՈՐԱՇԵՆ – ԾՈՎԱԶԱՐԴ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Նորաշեն, Ծովազարդ համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 1829 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի հարավ, ապա արևելք, թիվ 3-4 սահմանակետերով անցնում 338 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում Նորաշեն-Ծովազարդ միջհամայնքային ճանապարհը, թիվ 6 սահմանակետով, բարձրունքներով, անցնում 2737 մ, հասնում է թիվ 7 սահմանակետին, ապա բարձրունքներով շարունակվում է նույն ուղղությամբ 2695 մ, հասնում է թիվ 8 սահմանակետին: Թիվ 8 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, հատում դաշտային ճանապարհը, թիվ 9 սահմանակետով անցնում 880 մ, հասնում Նորաշեն, Ծովազարդ և Չկալովկա գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 8479 մ է:

## **ՆՈՐԱՇԵՆ – ՉԿԱԼՈՎԿԱ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»**

Նորաշեն, Չկալովկա գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, բարձրունքներով, թիվ 1-17 սահմանակետերով անցնում 6971 մ, հատելով Սևան-Մարտունի Հանրապետական նշանակության, Նորաշեն-Չկալովկա միջհամայնքային ճանապարհները և Սևան-Գավառ երկաթգիծը, ապա դաշտային ճանապարհները, հասնում Նորաշեն, Չկալովկա և Ծովազարդ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 6971 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.64  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՏՈՒՄ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նորատուս գյուղական համայնքը գտնվում է մարզի արևմտյան մասում:

Համայնքը հյուսիսից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Սևանա լճին, հարավից և հարավ-արևմուտքից «Բ»-«Գ» հատվածով՝ Գավառ քաղաքային համայնքին, հյուսիսից «Գ»-«Ա» հատվածով՝ Հայրավանք գյուղական համայնքին:

**ՆՈՐԱՏՈՒՄ - ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

«Ա»-«Բ» հատվածով սահմանագիծը համընկնում է Սևանա լճի ափին:

## **ՆՈՐԱՏՈՒՄ - ԳԱՎԱՌ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Բ»-«Գ»**

Նորատուս և Հայրավանք գյուղական, Գավառ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բլուրներով, ապա դաշտային ճանապարհով, թիվ 1-19 սահմանակետերով անցնում 4531 մ, հատելով դաշտային ճանապարհները և ձորակները հասնում թիվ 20 սահմանակետին: Թիվ 20 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 21 սահմանակետով անցնում 594 մ, հասնում թիվ 22 սահմանակետին, որտեղից թեքվում է դեպի արևելք, անցնում 359 մ, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 23 սահմանակետին, այնուհետև թեքվում է հարավ-արևելք, թիվ 24-25 սահմանակետերով անցնում 2035 մ, հատելով Երևան-Գավառ հին ճանապարհը, հասնում թիվ 26 սահմանակետին: Թիվ 26 սահմանակետից սահմանագիծը թեքվում է կրկին դեպի հարավ-արևելք, թիվ 27-30 սահմանակետերով անցնում 3584 մ, հատելով Գավառ-Նորատուս միջհամայնքային ճանապարհը, հասնում թիվ 31 սահմանակետին: Թիվ 31 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 32-33 սահմանակետերով անցնում 1309 մ, հատելով Նորատուս-Արծվաքար միջհամայնքային ճանապարհը, ջրատարը, հասնում թիվ 34 սահմանակետին: Թիվ 34 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, բնակավայրի հարավային եզրագծով, ապա լանջով, թիվ 35-39 սահմանակետերով անցնում 2075 մ, հատելով Գավառ գետը, դաշտային ճանապարհները, հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 40 սահմանակետին: Թիվ 40 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, ապա արևելք, թիվ 41 սահմանակետով անցնում 1998 մ, հատելով առուն և դաշտային ճանապարհը, հասնում թիվ 42 սահմանակետին, որտեղից ձորակով թեքվում է դեպի արևելք, թիվ 43-51 սահմանակետերով անցնում 1245 մ, հասնում Նորատուս գյուղական, Գավառ քաղաքային համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 17730 մ է:

## **ՆՈՐԱՏՈՒՄ – ՀԱՅՐԱՎԱՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Գ»-«Ա»**

Նորատուս, Հայրավանք գյուղական համայնքների և Սևանա լճի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնում 3074 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, թիվ 2 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-

արևմուտք, թիվ 3-12 սահմանակետերով անցնում 3655 մ, հատելով ժայռեր, բլուրներ և Սևան-Գավառ հանրապետական նշանակության ճանապարհը, հասնում թիվ 13 սահմանակետին: Թիվ 13 սահմանակետից սահմանագիծը բնակավայրի եզրագծով, բլուրներով, թեքվում է դեպի արևմուտք, թիվ 14-15 սահմանակետերով անցնում 1875 մ, հասնում թիվ 16 սահմանակետին, որտեղից բլրակներով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, թիվ 17-20 սահմանակետերով անցնում 2193 մ, հասնում թիվ 21 սահմանակետին: Թիվ 21 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 497 մ, հասնում Նորատուս, Հայրավանք գյուղական և Գավառ քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 11294 մ է:

ՀԱՎԵԼՎԱԾ 15.65  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ

## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Նորակերտ գյուղական համայնքը գտնվում է մարզի հարավարևելյան մասում:

Համայնքը հյուսիսից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ավազան գյուղական համայնքին, հյուսիս-արևելքից «Բ»-«Գ» հատվածով՝ Արփունք գյուղական համայնքին, արևելքից «Գ»-«Դ» հատվածով՝ Փոքր Մասրիկ գյուղական համայնքին, հարավ-արևելքից «Դ»-«Ե» հատվածով՝ Վարդենիս քաղաքային և «Ե»-«Զ» հատվածով Լուսակունք գյուղական համայնքներին, հարավից «Զ»-«Է» հատվածով Տորֆավան գյուղական համայնքին, հարավ-արևմուտքից «Է»-«Ը» հատվածով՝ Ծովակ գյուղական համայնքին, արևմուտքից «Ը»-«Թ» հատվածով՝ Սևանա լճին, հյուսիսից «Թ»-«Ա» հատվածով՝ Գեղամասար գյուղական համայնքին:

**ՆՈՐԱԿԵՐՏ - ԱՎԱԶԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ա»-«Բ»**

Նորակերտ, Ավազան և Գեղամասար գյուղական համայնքների տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևելք, անցնում 339 մ, հասնում թիվ 1 սահմանակետին, որտեղից թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 2 սահմանակետով անցնում 868 մ, հասնում է թիվ 3 սահմանակետին, ապա թեքվում հյուսիս, անցնում 224 մ, հասնում թիվ 4 սահմանակետին, այնուհետև թեքվում հարավ-արևելք, անցնում 235 մ, հասնում թիվ 5 սահմանակետին: Թիվ 5 սահմանակետից սահմանագիծը թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 6-10 սահմանակետերով անցնում 1269 մ, հատելով Նորակերտ-Գեղամասար միջհամայնքային ճանապարհը և ձորը, հասնում թիվ 11 սահմանակետին: Թիվ 11 սահմանակետից սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է հարավ-արևելք, թիվ 12-19 սահմանակետերով անցնում 930 մ, հասնում Նորակերտ, Ավազան և Արփունք գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 3865 մ է:

#### **ՆՈՐԱԿԵՐՏ - ԱՐՓՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Բ»-«Գ»**

Նորակերտ, Արփունք և Ավազան գյուղական համայնքների տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է հարավ-արևելք, թիվ 1-4 սահմանակետերով անցնում 1364 մ, հասնում Նորակերտ, Արփունք, և Փոքր Մասրիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետին:

«Բ»-«Գ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1364 մ է:

#### **ՆՈՐԱԿԵՐՏ – ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ` «Գ»-«Դ»**

Նորակերտ, Արփունք և Փոքր Մասրիկ գյուղական համայնքների տարածքների բաժանման «Գ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը ձորակով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, հատում է Փոքր Մասրիկ-Գեղամասար և Փոքր Մասրիկ-Նորակերտ միջհամայնքային ճանապարհները, թիվ 1-29 սահմանակետերով անցնում 4193 մ, հասնում թիվ 30 սահմանակետին, ապա թեքվում է դեպի հարավ, թիվ 31-34 սահմանակետերով անցնում է 1568 մ, հասնում Նորակերտ, Փոքր Մասրիկ

գյուղական և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետին:

«Գ»-«Դ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 5761 մ է:

### **ՆՈՐԱԿԵՐՏ – ՎԱՐԴԵՆԻՍ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Դ»-«Ե»**

Նորակերտ, Փոքր Մասրիկ գյուղական և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Դ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի արևմուտք, թիվ 1 սահմանակետով անցնելով 897 մ, հասնում թիվ 2 սահմանակետին, այնուհետև թեքվում է դեպի հարավ-արևմուտք, անցնելով 1073 մ, հասնում թիվ 3 սահմանակետին, որից հետո թեքվում է դեպի հարավ-արևելք, թիվ 4 սահմանակետով անցնում 888 մ, հասնում Նորակերտ Լուսակունք գյուղական և Վարդենիս քաղաքային համայնքների տարածքների բաժանման «Ե» հանգուցային սահմանակետին:

«Դ»-«Ե» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2858 մ է:

### **ՆՈՐԱԿԵՐՏ – ԼՈՒՍԱԿՈՒՆՔ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԸ՝ «Ե»-«Զ»**

